Յերկաթը, պղինձը, ալյումինը, կապարը, վուկին — այս բոլորը մետաղներ են: Մետաղների նշանակությունը շատ մեծ է: Մեքենաներն ու դադալաները, շոգենավերն ու շոգեքարշերը, ավտոմոբիլներն ու սավառնակները, ուլտերն ու կամուրջները մետաղից են շինված: Մանավանդ շատ մեծ է յերկաթի նշանակությունը:

Ի՞նչ հատկություններ ունեն մետաղները: Ի՞նչով են մետաղները տարբերվում մյուս մարմիններից:

Յեթե պղնձե դրամի յերեսը շփենք, նա կուսի փարթել: Փայլում են վոսկին, արծաթը, պղինձը, փայլում են նաև մյուս մետաղները: Այդ փայլից մետաղները հեշտ են ճանաչվում: Բոլոր մետաղներն ունեն առանձնահատուկ մետաղական փայլ:

Ով յեղել ե զարքնոցում, նա տեսած կմնի, թե ինչպես մուրճի հարվածների տակ յերկաթի շիկացած կտորները ցանկացածդ ձեն են ընդունում: Իսկ քարը մուրճի

հարվածների տակ կոտրատվում եւ վոշի յե դառնում Մետաղները կրանվում են, նրանք կրելի յեն:

Եթիւգրած մետաղը վոչ միայն կարելի յե կույ այլ և լար ձգել: Մետաղները ձգելի լեն, նրանք ձգականությունն ունեն:

Մետաղները սովորաբար պինդ նյութեր են, բացի մետաղից — մնդիկից, վոր բացառություն ե կազմում: Մնդիկը կը հեղուկ մետաղ է: Բայց պինդ մետաղներ տաքացնելի կարելի յե հեղուկ դարձնել: Այդ բանում հեշտ կհամոզվենք յեթե վերցնենք մի կտոր անագ, դնենք մետաղե գղաց մեջ և սպիրտայրոցի կամ պրիմուսի բոցի վրա տաքացնենք: Յերբ անագն ուժեղ տաքանա՝ կհալվի և հեղուկ կդառնա: Մետաղները հալվող են:

Յեթե վերցնենք ապակե ձողը և նրա մի ծալը պահենք սպիրտայրոցի կամ պրիմուսի բոցի մեջ, նրա մյուս ծայրը, վորտեղից բռնել ենք՝ չի տաքանա: Իսկ յեթե վերցնենք միենույն յերկարության և հաստության պղնձե կամ յերկաթե լար և նույնպես նրա մեկ ծայրը պահենք սպիրտայրոցի կամ պրիմուսի վրա, այն ժամանակ լարի մյուս ծայրը, վոր մեր ձեռքում ենք պահել, կտաքանա: Պատճառն այն է, վոր մետաղները տաքությունը լավ են հաղորդում:

Ելեկտրականության հաղորդալարերը մետաղից (սուվորական պղնձից) են պատրաստում: Մետաղից են պատրաստում, վորովհետեւ մետաղները ելեկտրականությունը լավ են հաղորդում:

Բոլոր մետաղները վերե հիշած հատկություններն ունեն, բայց զանազան մետաղներ իրարից տարբերվում են: Յերկաթը տարբերվում է պղնձից: Վոսկին տարբերվում է պղնձից:

Յերկաթը, պղնձը, թուջը — սև մետաղներ են:

Պղինձը, կապարը, ալյումինը — զունավոր սետաղներ են: Վոսկին — բանագին մետաղ ե:

Շատ քիչ մետաղներ կան, վոր բնության մեջ մաքուր վիճակում գտնվեն: Մեծ մասամբ մետաղները գտնագան հանքաքարերի մեջ են պատահում: Հանդարձաբերն այն ապարներն են, վորոնք իրենց մեջ մետաղներ են պարունակում և վորոնց միջից այդ մետաղը կարելի յէ հանել: Հանքաքարերը գետնի տակ են գտնվում: Ցերբեմն նրանք շատ խորը չեն ընկած և գետնի յերես են դուրս գալիս, բայց ավելի հաճախ յերկրի ընդերքում շատ խորն են ընկած լինում:

ՅԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ

Ցերկաթն ստացվում ե յերկաթի հանքաքարից: Սմենապարժեքավոր հանքաքարերը լեռներում են գտնվում: Դրանք են զորե յերկարքաբարը, կարմիր յերկարքաբարը և սեվ մագնիտաբարը: Մագնիտաքարի վորոշ կտորներ յերկաթե առարկաները մագնիսի նման դեպի իրենց են ձգում (նկ. 23):

ԽՍՀՄ-ում յերկաթաքարերը զբլխավորապես գտնվում են Ուրալում, Կրիվորոժյում, Կերչի մոտ — Հարավում, Սիբիրում՝ Կուզբասում:

Ուրալում մագնիտաքարերն ամբողջ լեռներ են կազմում, որինակ՝ Մագնիտնայա, Վիսոկայա, Բլազովատ լեռները:

Մագնիտնայա լեռնն մոտ այժմ հառուցված ե թուշ հանելու մի հսկա — գործուրան. իսկ նրա մոտ ստեղծվեց մի մեծ քաղաք՝ Մագնիտոգորսկ:



Նկ. 23. Մագնիտաքար

Ցերկաթի հանքաքարերի հանույթով Խորհրդային Միությունն այժմ յերկրորդ տեղն է բռնում աշխարհում:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՆՈՒՄ ՅԵՐԿԱԹԱՔԱՐԵՐ

Այն լեռներում, վորտեղ յերկաթաքարերը շատ խորը չեն ընկած, հանելու համար բաց փոսեր են խորում — բաց հանելու:

Վորովհետև յերկաթաքարերը պինդ ապար ե, ձեռքով կոռատելը շատ դժվար ե և անշահավետ: Հանքաքարը պայթեցնում են դինամիտով: Պայթեցնումները կատարում են այն ժամանակ, յերբ բանվորները հանքատեղից հեռանում են:

Գետնի տակ փորում են խորը հորեր — հանքահորեր: Հանքահորի տակի կողքերից անցքեր են փորում դեպի այն տեղերը, վորտեղից հանքաքար են վերցնում:

Ստորերկրյա աշխատանքներն ավելի բարդ են և ավելի վտանգավոր, քան բացովիյա աշխատանքները: Ստիպված են վլումների վտանգի գեմ պայքարել, զբա համար հանքահորերում հենարաններ են պատրաստում:

Գետք ե ջուրը դուրս քաշելուն նույնպես հետեւ, յեթե վոչ հանքահորը կարող ե ջրով լցվել: Բացի այդ՝ անհրաժեշտ ե փչացած ողը դուրս քաշել և թարմ ող ներս մղել:

Այսպես մարդիկ մտնում են գետնի խորքը և տիրապետում են այնտեղ գտնված հարստություններին:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԹՈՒԶ, ՊՈՂՊՈՏ ՅԵՎ ՅԵՐԿԱԹ

Ակզրում յերկաթաքարից ստանում են թուշ: Թուշ հալում են մի հատուկ հնոցում, վորը կոչվում ե դոմենի վառարան կամ ուղղակի դունա:

Դոմնան մի հսկա վառարան ե, աշտարակի նման, վորի բարձրությունը սովորաբար լինում է 20-30 մետր. Դոմնան միայն մի անգամ ե վառվում և այնուհետև նու աննընդհատ աշխատում ե բազմաթիվ տարիների ընթացքում:


Վերեկից դոմնայի մեջ լցնում են ածուխ և հանքաքարը, նու կիր և ավագ, վորպեսզի հանքաքարի միջից հեռացնեն վասակար խունուրդները: Իսկ դոմնայի տակից անընդհատ մաքուր տաք ող են փչում: Այդ ողը հարկավոր ե ածխի այրման համար:

Ածուխն այրվելիս հանքաքարից յերկաթն անջատվում ե և խառնվում ածխի չայրված մնացողների հետ և ստացվում է թուզ:

Հալած թուջը հոսում ե զեպի դոմնայի հատակը: Յերբ այնտեղ շատ հալած թուջ ե հավաքվում, դոմնայի ներքեկի անցքը բաց են անում, վոր մինչև այդ ժամանակ կավով եր ծեփված: Հալած թուջը հրաշեկ շիթերով թափվում ե այնտեղից, հոսում ե ակոսների մեջ և հետո պնդանում ե: Արագես ե ստացվում թուջը:

Յուրաքանչյուր 100 մաս թուջն ընկնում ե 3—6 մաս ածուխ: Թուջը շատ կարծր ե, բայց փրխում, հարվածելիս կոտրվում ե: Նկ. 24. Դոմենի վառանից զանազան իրեր են ձուլում:

Հատուկ հնոցներում թուջից պողպատ և յերկաթ են ստանում: Հալած թուջի միջով փչում են ողի ուժեղ հոսանք:



Այդ ժամանակ, ածխի մի մասն այրվում ե: Յեթե 100 մաս թուջին մնում $\frac{1}{2}$ - $\frac{2}{3}$ մաս ածուխ, ստացվում ե պողպատ: Պողպատը շատ կարծր և կուելի յեւ Պողպատից շենում են մեքենաներ, գործիքներ և ուղարկում:

Յեթե հալած թուջի միջի համարյա ամբողջ ածուխն այրվի, այն ժամանակ ստացվում ե յերկաթը: Յերկաթը գործածում են այն տեղերում, վարտեղ հարկավոր ե փափուկ մետաղ, որինակ՝ նրանցից պատրաստում են թիթեղներ՝ կտուրներ ծածկելու, գույլերի, թասերի և ուրիշ երերի համար:

Յերկաթն ոգում ժանդոտվում ե: Ժանդոտվելուց պահանջնելու համար յերկաթն իրերը ներկում են կամ պատում չժանդոտվող մետաղներով — ցինկով, նիկելով և ուրիշ մետաղներով:

Պողպատը նույնպես ժանդոտվում ե, և դժունից մեքենաները շուտ են փշանում: Շատ յեռնող պետք յեղակ թափել, վորպեսզի շժանդոտվող պողպատ ստանանք: Յեկվերջերս գտանք: Զժանդոտվող պողպատ պատրաստելու գյուտը խորհրդացն գիտության և տեխնիկայի խոշոր հաղթանակն եւ:

Յարական Ռուսաստանում թուջի, պողպատի և յերկաթի արաւադրությունը շատ անսշան եր: Իսկ այժմ ԽՍՀՄ-ում կառուցվում ե գործի յեն զրվում նոր դոմնաներ: Խորհրդացն Միաթյունը թուջի արտադրությունն ավելացրել ե յերեք ու կես անգամ, իսկ պողպատի արտադրությունը՝ համարյա չորս անգամ և այժմ թուջի արտադրությամբ յերկորդ իսկ պողպատի արտադրությամբ յերրորդ տեղն ե բնեում աշխարհում:

Պղինձը բնության մեջ շատ հաճախ գտնվում է պը-
ղինձաքարի մեջ, բայց պատահում ե նաև մաքուր վիճա-
կում: Դա բնածին պղինձ ե:

Պղինձն ել յերկաթի նման պղինձաքարից են ձուլում:
Մաքուր պղինձը կարմիր գույն ունի: Նա շատ լավ
կռանվում ե և լավ ձգվում ե լար գառնալով: Բայց նա
շատ փափուկ ե: Այդ պատճառով շատ քիչ ե պատահում,
վոր մաքուր պղինձը գործածեն իրեր պատրաստելու հա-
մար: Յեթե պղինձը մյուս մետաղների հետ միասին հա-
լենք, կստացվի պինդ խառնուրդ:

Պղինձի և անսպի խառնուրդը կոչվում է բրոնզ: Բրոն-
զը գործադրվում ե մեքենաշինարարության մեջ: Բրոնզից
շինում են արձաններ և զանազան զարդեր:

Պղինձի և ցինկի խառնուրդը կոչվում է արույր (լա-
տուն): Շատ իրեր, վորոնք սովորաբար պղինձից են հա-
մարվում: Խսկապես արույրից են շինված: Արույրը պղին-
ձից հեշտ ե տարբերելու: Նա գեղին գ ւյն ունի: Արույրը
մեծ չափով գործածվում ե մեքենաշինարարության մեջ
և ռազմական գործում:

Ա.ԼՅՈՒՄԻՆ

Ալյումինը նոր մետաղ ե: Առաջին անգամ այդ մե-
տաղը ստացվել է սրանից հարյուր տարի առաջ: Այն ժա-
մանակ շատ թանգ եր գնահատվում: Մեկ կիլոգրամ ալյու-
մինն արժեր 1200 ռուբլի, վորովհետև չեյին կարողանում
ենան ձևով ստանալ: Ալյումինից միայն զարդեր եյին
պատրաստում:

Միայն մոտ ժամանակներս ելեկտրականության մի-
ջոցով սկսեցին եժան ձևով ալյումին ստանալ:

Ալյումինը դարձավ անհրաժեշտ մետաղ: Նա մեր արն-
տեսության մեջ հետքետե ավելի մեծ տեղ գրավեց: Յնկ
կարելի յե ասել, վոր ալյումինը ապագայի մետաղն ե:

Իսկ ինչու ալյումինը մյուս մետաղներին գործածու-
թյունից դուրս մղեց: Ալյումինն ամենատարածված մե-
տաղն ե աշխարհիս վրա: Մաքուր վիճակում նա չի պա-
տահում, բայց զանազան ապարների մեջ շատ կա:

Ալյումինը գլխավորապես ստանում են բոխիդ հան-
քաքարից: Նրա խոշոր հանքերը գտնվում են Լենինգրադի
մարզում և Ռուսական:

Ալյումինը հանքաքարից ստանում են ելեկտրակա-
նության միջոցով:

Ալյումինն սպիտակ արծաթափայլ մետաղ ե: Նա ողի
մեջ չի ժանգութափում: Ալյումինը թեթև ե, այդ պատճառով
նա այնպիսի մեծ նշանակություն ե ստանում սավառնակ-
ների և դիրիժաբեների շինարարության մեջ:

Բայց ալյումինը փափուկ մետաղ ե, այդ պատճառով
ամենից հաճախ գործածվում ե ուրիշ մետաղների հետ՝
խառնածույլերի մեջ:

Ցեվ այն իրերը, վորոնք սովորաբար կոչվում են ալ-
յումինե իրեր, որինակ՝ գդալները, ջրամանները, խսկապես
ալյումինի և ուրիշ մետաղների խառնածույլերից են շին-
ված:

Ցարական Ռուսաստանը ալյումինի սեփական արտա-
դրություն բոլորովին չուներ: Խորհրդային Միությունն
ստեղծել ե ալյումինի արդյունաբերություն և այժմ ալ-
յումինի արտադրությամբ յերրորդ տեղն ե քննում աշխար-
հում:

Կ Ա. Պ Ա. Բ

Կապարը բնության մեջ պատահում ե, գլխավորապես
կապարաքարի ձևով, վորը կոչվում ե կապարի փայլուկ:

Կապարը շատ փափուկ մետաղ է: Նա գանակով հեշտ կտրվում է: Այդ պատճառով կապարն ել շատ հաճախ գործածում են խառնածույլ վիճակում:

Կապարի և անազի խառնածույլը հեշտ է հալվում և գործածվում ե զողման համար: Կապարի, անազի և սուրբացի խառնածույլը կիրավում ե տպագրական տառեր ձուլելու ժամանակ: Կապարից ամժանեղեն չեն պատրաստում, փորովճետե թունավոր ե:

Մաքուր կապարը գործ ե ածվում խողովակներ, կոտորակներ, գնդակներ և պլոմք պատրաստելու համար:

Վ Ո Ս Կ Ի

Բնության մեջ միայն վոսկին է, վոր մաքուր վիճակում ե պատահում: Նա ապարների մեջ գտնվում ե մանրիկ կտորներով կամ յերակներով: Հազվադյուս դեպքերում վոսկին պատահում ե խոշոր — բնապծին կտորներով:

Ապարները քայլայվելիս վոսկու հատիկներն ընկնում են ավազի մեջ և ստացվում ե վոսկերեր ավագ: Այդպիսի ավազից վոսկին հանում են լվանալու միջոցով: Վոսկին ծանր մետաղ է, այդ պատճառով լվանալիս ավազը ըլի հետ գնում է, իսկ վոսկու հատիկները մնում են այն ամանում, վորի մեջ լվացվում ե վոսկերեր ավազը:

Վոսկերը ավազի մեջ շատ քիչ վոսկի կա: Լվանալու համար շահավետ ե համարվում այն վոսկերեր ավազը, վորի 160 կիլոգրամի մեջ մի գրամ վոսկի կա: Վոսկի ստանալու համար շատ մեծ աշխատանք է ծախսվում, այդ պատճառով ել նա թանգ արժե:

Մաքուր վոսկին փափուկ մետաղ է: Նա գեղին գույն ունի և խիստ փայլուն է: Նա ողի մեջ չի ժանգություն: Վոսկին աշքի յե ընկնում իր խիստ կռելիությամբ և ձրգականությամբ: Վոսկին ամենից շատ գործածվում է

դրանքներ և զանազան զարդարանքներ պատրաստելու համար: Իրեք պատրաստելու համար վոսկին դործածում են արծաթի կամ պղնձի հետ խառնածույլ վիճակում:

ԽՍՀՄ-ում վոսկին ստացվում է Ռւբալում, Միբիրում և Միջին Ասիայում:

Մեր արտադրած վոսկին դառնում ե Խորհրդային Միության վոսկու պաշարը: Վոսկու արտադրությամբ մեր լեռներն արժմ յեկըուդ տեղն է ունում աշխարհում:

ՄԵՏԱՂՆԵՐԸ ԽՍՀՄ-Ի ԺԱՂԱՔՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՑՈՒԹՅԱՆ
Մ Ե Զ

Ինչպես վառելիքը, այնպես ել մետաղները բացառիկ խոշոր նշանակություն ունեն մեր ժողովրդական տնտեսության մեջ: Մետաղների ամենագլխավոր նշանակությունն այն է, վոր նրանց անհրաժեշտ են մեքենաների արտադրության համար: Իսկ մեքենաներն ել անհրաժեշտ են մեր յերկրի խնդումարտցման համար:

Լենինի պատգամի հտմածայն մենք զարգացնում ենք մեր ծանր արդյունաբերությունը, մանավանդ մեքենաշինարարությունը: Մտալինան հնդայակների տարիներում ծանր արդյունա և բրության մեջ մենք ձեռք բերինք բացառիկ աջողություններ:

Մեզ մոտ կառուցված են հսկայական թուշածուլական գործարաններ, ինչպես, որինակ, Մագսիտոգորսկում, Մտալինակում և Մակեյեվկայում: Այս յերեք հսկաները ձուլում են այնքան թուշ, վորքան ձուլում ելին ցարտկան թուսատանի բոլոր գործարանները:

Կառուցված են գունավոր մետաղների ձուլման հրակական գործարաններ, որինակ Ռւբալի պղնձածուլական կործարանները, Վոլխովի ալյումինի գործարանը և ուրիշները:

Կամ... բիած են Ստալինգրադի, Զելյարինսկի և Խար-

կովի տրումարք զործարանները, Սարատով՝ կոռաբայուի գոր-

ծարանը, Խոստովի գյուղատնտեսական մեքենաների գոր-

ծարանը և ուրիշները:

Կառուցված են ավտոմոբիլներ, խնդնաթիռներ, մո-

տուններ, շոգեքարշեր և վագոններ պատրաստող գործա-

րաններ:

Մեքենաշինարարությունը ԽՍՀՄ-ում, նախապատե-

րագման շրջանի հետ համեմատած քսանութ անդամ

մեծացել ե և տնտեսության այս կարևորագուն ճյուղի

մեջ մեր յերկիրն այժմ յերկրորդ տեղու ե բռնում աշխար-

հում:

Մեր միութեանը հետամնաց գյուղատնտեսական յերկ-

րից զարձակ հզոր արդյունաբերական յերկիր:

Պ. ԶՈՒՐ

Յերկրագնդի վրա շատ չուր կա: Հակայական և ան-

ծայրածիր ծովերն ու ովկիանոսները ծածկում են յերկ-

րագնդի մակերեսը: Ով յեղել ե ծովի մոտ, նա տեսած

կինի, թե ինչպիսի անեզը տարածություն ե նա: Ել ծայր

ու վերջը չի յերեւմ: Յեկ թվում ե, թե այստեղ հեռվում

ծովը միանում ե յերկնքին:

Անհամար մեծ ու փոքր գետերը զանազան ուղղու-

թյամբ ակոսում են յերկրի մակերեսը և իրենց ջրերը

տանում լցնում են ծովերն ու ովկիանոսները:

Շատ ջուր կա նաև գետնի տակ: Որինակ՝ յերբ հոր

ենք փորում, այս կամ այն խորության մեջ պատահում

ենք ջրի: Ստորերկրյա ջուրն ե այդ: Վորոշ տեղերում

որինակ, ձորերում նա բղխում ե գետնի յերեսը վորպես,

աղբյուր:

Վերեւում ողի մեջ ել ջուր կա: Բարձրում լողացող

ամպերը կազմված են ջրի մանրիկ կաթիներից կամ սառցի

բյուրեղներից: Ջուրը վորպես անձրև կամ ճյուն ամպերից

թափվում ե գետնի վրա:

Ջուրը մեծ նշանակություն ունի թե բնության և թե

ժողովրդական տնտեսության մեջ:

ԶՐԻ ՅԵՐԵՔ ՎԻՃԱԿԸ

Ջուրը սովորաբար հեղուկ ե, բայց միշտ հեղուկ չի

մնում: Յերբ ջուրը սառչում ե, դառնում ե սառույց: Սա-

սույցը պինդ նյութ ե: Իսկ յերբ ջուրը գոլորշիանում ե,

դառնում ե շոգի: Շոգին, ինչպես նաև մեզ շրջապառ


ողը, գագանման նյութ ե:

Ուրեմն ջուրը լինում ե յերեք վիճակում՝ պինք

մեղուկ և գագանման:

Փորձ 1. Սառուցը տաքացնենք բաժակի մեջ: Նա հալչում եւ գառնում եւ սառույց: Ուրեմն ջուրը տաքացնելիս պինդ վիճակից անցնում է նեղուկ վիճակի:

Փորձ 2. Բաժակում ստացած ջուրը շարունակենք տաքացնել: Զուրը յեռում եւ գառնում շոգի: Ուրեմն ջուրը տաքացնելիս նեղուկ վիճակից անցնում է գազանըման վիճակի:



Նկ. 25.

Բայց ջուրը մեկ վիճակից մյուս մին եւ փոխվում վոչ միայն տաքացնելիս, այլ և սառեցնելիս:

Փորձ 3. Սրվակը լցնենք ջրով, բերանը փակենք մի ալյապիսի խցանով, փորի մեջ անց եւ կացրաց մի աղակե կարծ խողովակ (Նկ. 25): Սրվակի ջուրը տաքացնենք մինչև յեռալը: Զուրը յեռում եւ գառնում շոգի: Բայց վոչ սրվակում և փառ ել խողովակի անցքի մոտ շողին չի յերևում: Այնաեղ իսկական աներենվույթ շոգի յե: Նա բարձրանում եւ ավելի բարձր, պաղում եւ գառնում եւ գառնում եւ ջրի մանրագույն կաթիլներ: Նրանցից ստացվում եւ մշուշ, փորը խողովակի անցքի վերեվում դառնում եւ տեսանելի: Ուրեմն ջուրը սառեցնելիս գազանըման վիճակից անցնում է նեղուկ վիճակի:

Իսկ յեթե ջուրն ավելի պաղցնենք, նա կսոչի:

Փորձ 4. Վերցնենք բարակ ապակուց մի սրվակ: Նրա մեջ լցնենք մի քիչ ջուր: Զրով սրվակը դնենք ձյան և աղի խառնուրդի մեջ: Այդ խառնուրդը սաստիկ սառչում ե: Սրվակի ջուրը սառչում եւ գառնում եւ սառույց: Ուրեմն ջուրը սառեցնելիս նեղուկ վիճակից անցնում եւ պինդ վիճակի:

ԲՆԱԿՄՆ ԶՈՒՐԸ ՄԱՔՈՒՐ Ե ԱՐԴՅՈՒՔ

Բնական ջուրը՝ ծովերի, լճերի, գետերի և առվակների ջուրն ե: Բնական ջուրը յերբեք չի լինում կատարյալ մաքուր: Նրա մեջ հաճախ լինում ե պղտորությունն Մանավանդ պղտոր ե լինում գետերի ջուրը գարնան վարարումների ժամանակ: Բացի այդ՝ ջրի մեջ միշտ լուծված են լինում զանազան նյութեր: Մանավանդ ծովի ջրի մեջ լուծված են բազմաթիվ զանազան նյութեր: Ծովի ջուրը դառնադղի յե, վորովհետեւ նրա մեջ լուծված են բազմաթիվ դառն և աղի համ ունեցող աղեր:


Տնտեսության համար հաճախ պահանջվում ե այնպիսի ջուր, փորի մեջ պղտորություն չլինի: Իսկ յերբեմն ել պահանջվում ե այնպիսի ջուր, փորի մեջ վոչ մի աղ չլինի: Իսկ ինչպես են ջուրը պղտորությունից և նրա մեջ լուծված աղերից մաքուր:

Վերցնենք մի բաժակ ջուր և նրա մեջ լցնենք մի գղալ կավ և մի գղալ աղ: Լավ խառնենք: Զրի մեջ կավը չի լուծվում, և կավից ջուրը պղտորվեց: Աղը ջրի մեջ լուծվում ե, և աղից ջուրն աղիացավ: Ուրեմն մենք պատրաստեցինք պղուր աղի ջուր: Փորձենք արդ ջուրը մաքրել պղտորությունից և նրա մեջ լուծված աղից:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԶՈՒՐԸ ՄԱՔՈՒՐ ՊՂՏՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Փորձ. Վորպեսզի ջուրը մաքրենք պղտորությունից, կրամենք: Մաքուր ծծող թղթից պատրաստենք մի քամիչ:

(նկ. 26). թղթե քամիչը տեղավորենք ձագարի մեջ: Զադարը դնենք մաքուր շղի մեջ: Զգուշությամբ մեր պատրաստած պղտոր աղի ջուրը լցնենք քամիչի մեջ (նկ. 27):



Նկ. 26. Քամիչն ինչպես են պատրաստում:

Մենք քամիչի մեջ պղտոր ջուր ենք լցնում, իսկ քամիչից կաթում ե մաքուր և թափանցիկ ջուր: Ուրեմն քամիչը պահում ե պղտորությունը և բաց և թողնում ջուրը: Քամիչը մաքրում ե ջուրը պղտորությունից: Այս գործողությունը կոչվում ե քամել:

Մենք պղտոր ջուրը քամեցինք թղթե քամիչով: Այդպես ել զանազան պղտոր հեղուկներ քամում են դեղատներում և լաբորատորիաներում: Զրմուղ կայաններում սովորաբար ջուրը քամում են ավագե քամիչներով: Յեթե պղտոր ջուրը լցնենք մաքուր մի շերտ ավագի վրա, ավագի միջով կիսուի մաքուր և թափանցիկ ջուր, իսկ պղտորությունը կմնա ավագի մեջ: Զրմուղ կայանից արդեն տրվում ե քամած ջուր:

Բայց քամիչը մաքրում ե արդյոք ջուրը նաև նրա մեջ լուծված աղից: Փորձենք քամած ջրի համը: Նա նույնքան տղի յե, վորքան և քամելուց առաջ: Ուրեմն ջուրը բամելով կարելի յե միայն պղտորությունից մաքրել: Ջուրը քամելով լուծված աղից մաքրել չի կարելի:


ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԱՔՐՈՒՄ ԶՈՒՐԸ ՆՐԱ ՄԵԶ ՈՒԾՎԱԾ
Ա.Լ.Բ

Փորձ. Վորապեսզի ջուրը մաքրենք նրա մեջ լուծված աղից, ջուրը թորենք (նկ. 28):

Մրվակի մեջ լցնենք քամած աղի ջուրը: Մրվակի թերանը փակենք մի այնպիսի խցանով, վորի մեջ անց ե կացրած ապակե խողովակի մի ծայրը: Խողովակի մյուս ծայրը մտցնենք մասուր վորձանոթի մեջ: Փորձանոթը դնենք սառը ջրով կամ ձյունով լցրած բաժակի մեջ:



Նկ. 27. Քամելը:



Նկ. 28. Զրի թորումը:

Մրվակի ջուրն սկսենք տաքացնել: Տաքացնենք մինչեվ նրա յեռալը և շարունակենք յեռացնել: Վորոշ ժամանակից հետո վորձանոթի մեջ կաենենք ջուր: Փորձանոթի ջուրը քանի գնա՝ ավելի և ավելի կշատանա: Վորտեղից ստացվեց այդ ջուրը:

Ջուրը յեռացնելիս դառնում է շոգի: Շոգին սրվակի միջից խողովակով դուրս ե գալիս և մտնում ե սառը վորձանոթի մեջ: Սառը վորձանոթի մեջ շոգին սառնում և

կառնում և ջուր: Ահա այդ ջուրն եւ վոր հավաքվում եւ փորձանոթի մեջ: Յերբ փորձանոթի մեջ շատ ջուր հավաքվի, տաքացնելը դադարեցնենք:


Ուրեմն մեր ջրի մի մասը սրբակից թորեցինք փորձանոթի մեջ: Մենք կատարեցինք ջրի թորում: Իսկ ինչ տեսակ ջուր ստացանք թորումից հետո:

Փորձենք փորձանոթի մեջ հավաքած ջրի համը: Նա պնդած եւ նրա մեջ այլևս աղ չկա: Թորելով մենք ջուրը մաքրեցինք նրա մեջ լուծված ազից: Այդպիսի ջուրը կոչվում է թորած ջուր: Այդ բոլորովին մաքուր ջուր եւ:

Դեղատներում և լաբորատորիաներում ել ճիշտ նույն ձևով են ջուրը թորում: Թորած ջրով պատրաստում են զեղեր և զանազան լուծուլթներ:

Ա.ՆՉՐԵՎ ՅԵՎ ԶՅՈՒՆ

Յերկրի մակերեսից և ջրավազաններից տուաշացած ջրային գոլորշիները բարձրանում են վերև: Այստեղ նըրանք սառում են և դառնում են ջրի մանրագույն կաթիներ, վորից առաջանում են ամպեր (նկ. 29): Զ ի




Նկ. 29. Ամպեր:

մանրիկ կաթիներն իրար միախառնվելով՝ դառնում են ամպերի խոշոր և ծանր կաթիներ: Այդպես են տաւածանում թուլք աւալերը, վորոնո կոչվում են թուխալ: Ջրի ծանր կաթիներն ամպերից թափվում են գետնի վրա: Անձրեւ գալիս:

Տարվա տաք յեղանակին անձրեւ եւ առաջանում, իսկ տարվա ցուրտ յեղանակին՝ ձյուն: Ձյունն առաջանում է նույնպես ջրի գոլորշիներից, բայց սառնամանիքի ժամանակ նրանք վոչ թե ջրի անը կաթիներ են դառնում, այլ ձյան կարծր բյուրեղիկներ (նկ. 30):

Յեթե յեղանակը շատ ցուրտ չե, այն ժամանակ արդ



Նկ. 30. Ձյան բյուրեղներ (սհծացը):

Ճան բյուրեղներն ողի մեջ միախառնվում են և կազմում ձյան փաթիլներ: Ձյունը թափվում է ցած, և գետինը ծածում եւ սպիտակ սավանու:

ՅՈՂ ՅԵՎ ՅԵՎԱՄ

Անձրեն ու ձյունն առաջանում են ողի մեջ, բարձրանում և հետո թափվում են յերկրի վրա: Յօղն ու յեղյամն առաջանում են պինդ մարմինների սառը մակերեսի վրա: Սովորաբար մենք նըրանց աւստում ենք գետնի յերեսին խոտերի, ծառերի, քարերի և ուրիշ առարկաների վրա:

Յօղն առաջանում է այսպես: Ամառը յերեկոյան և գիշերը յերկրի մակերեսը և նըրա վրա գտնված առարկաները սառում են: Նըրանց հետ շփմելով շրջապատի ողը և

Նրա մեջ գտնված ջրային գոլորշիներն ել սառում են: Սառած ջրային գոլորշիները նստում են այդ առարկաների մակերեսին վորպես ցաղի մանրիկ կաթիլներ:

Իսկ յեթե յերկրի մակերեսին գտնված առարկաները սաստիկ սառն են, ինչպես, որինակ, այդ պատահում ե ուշ աշնանը կամ ձմեռը, այն ժամանակ ջրային գոլորշիներն ողի միջից նստում են նրանց վրա վոչ թե փոքրիկ կաթիլների ձևով, այլ սառցի մանրագույն բլուրեղների ձևով: Այսպես ե առաջանում յեղյամը:

ԶԲԻ ՇՐՋԱՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արել տաքացնում ե յերկրագունդը: Արել տաքացնում ե յերկրի մակերեսը, գետերի, լճերի և ծովերի մակերեսի ջուրը: Արել տաքությունից ջուրը գոլորշիանում ե և դառնում ե շողի: Ջրային գոլորշին բարձրանում ե վեր, յերկրից շատ բարձր և սառում ե: Չե վոր ինչքան բարձր, այնքան ել ողն ավելի սառն ե լինում: Ջրային գոլորշին սառչելիս դառնում ե ջրի մանրագույն կաթիլներ կամ նույնիսկ սառցի մանրագույն բյուրեղներ: Այսուես, վերեսում, յերկրից բարձր, ջրի մանրագույն կաթիլներից կամ սառցի մանրագույն բյուրեղներից առաջանում են ամպեր: Նրանցից ջուրը նորից թափվում է գետնի վրա վորպես անձրև և ձյուն:

Անձրեկի և ձյան ջրի մի մասը ծծվում ե գետնի մեջ, մի մասը գոլորշիանում ե, իսկ մյուս մասը առվակներ կազմելով հոսում ե գետերի մեջ: Գետերն ել նորից այդ ջուրը տանում են զետի ծովը:

Նորից այդ ջուրը գոլորշիանում ե ծովերի մակերեսից: Նորից ջրային գոլորշին բարձրանում ե ողի մեջ: Նորից առաջանում են ամպեր: Յեկ նորից ջուրը թափվում է գետնի վրա վորպես անձրև կամ ձյուն:

Այսպես անընդհատ ցի երջանառություն ե կատարում բնուրյան մեջ:

ԶԲԻ ԸՆԴԱՐՁԱԿԵԼԸ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՎ
ՍԵՂՄՎԵԼԸ ՅՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ


Վորպեսպի ծանոթանանք ջրի այդ հատկություններին, հետեւյալ փորձն անենք (Նկ. 31):

Վերցնենք մի սրբակ և լցնենք ներկած ջրով: Սըր-վակի բերանը պինդ փակենք խցանով, վորի մեջ մացրած և մի ապակե խողովակ: Սյու ժամանակ ջրի մի մասը կմտնի խողովակի մեջ: Խողովակում մտած ջրի մակերեսի վույթը, թել կապելով նշան անենք:

Փորձ 1. Սըրվակի ներկած ջուրը տաքացնենք: Դրա համար սրվակը զնենք տաք ջրի մեջ: Իսկույն կնկատենք, թե ինչպես ներկած ջուրը խողովակի միջով լսարձրանում թե վերի: Դրա պատճառն այն է, վոր ջուրը տաքացնելիս ընդարձակվում է:

Փորձ 2. Այժմ սրվակի ներկած ջուրը սառեցնենք: Դրա համար սրվակը տեղափոխենք սառը ջրի կամ ձյան մեջ: Նկատվում է, թե ինչպես ներկած ջուրն այժմ խողովակի միջով իջնում է ցած: Դրա պատճառն այն է, վոր ջուրը սառեցնելիս սեղմվում է:

Ուրեմն ջուրը ջերմությունից ընդարձակվում է, իսկ ցրտությունից սեղմվում: Մյուս նեղուկ մարմինների, որինակ՝ սպիրտի և սընդիկի հետ ել նույն բանն ե կատարվում: Բայց ջուրն ունի և իր և խողովակի միջով առանձնատկությունը:



Նկ. 31. Ջուրը տաքացնելիս ընդարձակվում է և խողովակի միջով առանձնատկությունը:

ԶՐԻ ԸՆԴՀԱԿՎԵԼԸ ՍՍՈՉԵԼԻՑ

Փորձ. Շիշը լցնենք ջրով և բերանը խցանով պինդ փակենք: Ջրով շիշը դնենք դուրսը, սառնամանիքի ժամանակ:

Վորոշ ժամանակից հետո կտեսնենք, վոր աշխ ջուրը սառեց և շիշը տրաքվեց: Իսկ ինչու շիշը տրաքվեց, վորովհետև ջուրը սառչելիս ընդարձակվում է:

Համարյա բոլոր հեղուկները սառեցնելիս սեղմվում են: Իսկ ջուրը սառեցնելիս վոչ թե սեղմվում է, այլ, ընդհակառակը, ընդարձակվում է: Զրի առանձնահատկությունն է այդ:

Զրի այս առանձնահատկությունը անտեսության մեջ ստիպված ենք միշտ հաշվի առնել: Գուցե գուը տեսած լինեք, վոր ջրմուղի խողովակները գետնի տակով են անցկացնում, վորպեսզի ձմեռը ջուրը նրանց մեջ չսառի: Իսկ յեթե ջուրը սառչի, այդ մետաղե խողովակները կտրաքվեն: Մառչող ջրի ուժն այդքան մեծ է:

Բնության մեջ այդ ուժն հսկայական քարեր և կոտրատում: Յեթե քարի ճեղքերի մեջ ջուր և հավաքվում, այդ ջուրը սառչելիս ընդարձակվում է և քարը կտրված է անում: Այդպես ուրեմն սառչող ջուրը քայքայում է ապարները:

ԶԵՐՄԱՉԱՓ

Զերմաչափը մի գործիք է, վորի միջոցով իմանում են, թե սենյակի ողը կամ դրսի ողը վորքան է տաք, ջուրը կամ մյուս առարկաները վորքան են տաք: Զերմաչափով չափում են բարիչառնությունը:

Զերմաչափը բաղկացած է մի բարակ ապակե խողովակից՝ ներքեսում գնդիկ: Գնդիկի մեջ գտնվում է սնդիկ կամ ներկված սպիրո: Զերմաչափի խողովակն ամրացված


է տախտակի վրա: Տախտակի վրա բաժանված գծիկներ կան, յուրաքանչյուրի դիմաց դրված են թվանշաններ: Այդ թվանշանները ցույց են տալիս ասինաները (նկ. 32):

Տաքացնելիս սնդիկը շերմաչափի մեջ ընդարձակվում է և խողովակի միջով բարձրանում է: Սառեցնելիս սնդիկը ջերմաչափի մեջ սեղմվում է և խողովակի միջով իջնում ջերմաչափի մեջ սեղմվում է և խողովակի միջով իջնում է: Այդ ժամանակ նայում են, թե վոր գծիկի մոտ, վոր թվանշանի դիմաց կանգնեց սնդիկի սյունը ջերմաչափի խողովակի մեջ:

Փորձ 1. Զերմաչափը դնենք հալվող սառցի կամ ձյան մեջ: Սնդիկի սյունը կկանգնի այն գծիկի դիմաց, վորտեղ դրված է 0 թվանշան և նա այնտեղ կանգնած կմնա ամբողջ ժամանակ, քանի գեռ սառուցը հալվում է: Ուրեմն սառուցը հալվում է 0 ասինանի տակ: Այնպես ել 0 ասինանին մահուր ջուրը սառչում է: 0 աստիճանը սառցի հալման և ջրի սառեցման կետն է:

Փորձ 2. Զերմաչափը պահենք յեռացող ջրի շոգու մեջ: Սնդիկի սյունը կկանգնի այն գծիկի դիմաց, վորտեղ նշանակված է 100 թվանշանը: Յեկ նա այնտեղ կկանգնի ամբողջ ժամանակ, քանի գեռ ջուրը յեռում է: Մահուր ջուրը յեռում է 100 ասինանի տակ: 100 աստիճանը ջրի յեռացման աստիճանն է:

Սառցի հալման և ջրի յեռացման կետերի միջև ընկած տարածությունը ջերմաչափի վրա բաժանում են 100 հավասար մասերի: Այդ բաժանումները կոչվում են աստիճաններ: Նույնպիսի բաժանումներ են անում Զերմաչափ:



տիճանից՝ բարձր: 0-ից բարձր աստիճանները կոչվում են
տաճուրյան աստիճաններ, իսկ 0-ից ցածր՝ ցրտուրյան
աստիճաններ:

Աստիճանները կրճատ ձևով նշանակում են ^o նշանով:
Այսպես, որինակ, գրում են՝ սառուցը հալվում է 0°-ին,
ջուրը յեռում ե տաքության 100°-ին:

Մոդիկի այդպիսի ջերմաչափ առաջին անգամ շինել
ե գիւնական Ցելիուսը, մեզանից 190 տարի առաջ: Այդ
ջերմաչափն այդպիս ել կոչվում ե՝ Ցելսիուսի ջերմաչափ:

Առաջադրության: Ջերմաչափի միջոցով վորոշեր, թե վորքնն
ե տաքացած սառը և տաք ջուրը:

Ջերմաչափի ցուցումները գրի առեք:

ԶՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Չուրը բնության մեջ հանդիսատ ջի մնում: Նա մշտա-
կան շարժման մեջ ե գտնվում: Չուրն իր շարժման ըն-
թացքում մեծ աշխատանք ե կատարում:

Ամենից առաջ ջուրը կատարում ե բայխայից աջաս-
տանի: Նա քայքայում ե ապարները և փոխում ե յերկրի
մակերեսը:

Ծովի ալիքներն ալեկոծության ժամանակ ուժով հար-
վածում են բարձր տփերին և գրանք քանդում:

Գետերի ջրերը մաշում են գետափերը, մանավանդ
լեռնային արագահոս գետերի ջուրը: Շատ ավելի ընանիկ կեն-
դալիների և իր սեփական ուժը: Այն ժամանակ մարդը
միայն կենդանի շարժիչներ եր գործադրում աշխատանքի
համար:

Մեծ քայքայիչ աշխատանք են կատարում ջրվեժները
Նրանք յերբեմն արնապիս հսկայական բարձրությունից են
թափվում, վոր հատակը խորը փորում են:

Անձրևներն ու ձյան հալքի ջրերը մաշում են յերկրի
մակերեսը և յերբեմն մեծ ձորեր են առաջացնում:

Առցադաշերի շարժվող սառուցները լեռներից դան-

դաղ ցած սահելիս հարթում են յերկրի մակերեսը, գլորում
և հղուած են իրենց տակ գտնված քարերը:

Բայց ջուրը բնության մեջ կատարում ե նաև ժինարաց
աշխատանի: Արագահոս ջուրը քշում, տանում ե մանր
քարեր, ավագ, կավ և կուտակում ե այնպիսի տեղերում,
վորտեղ հոսանքն սկսում ե դանդաղեց: Ասպիսով գետերի
մեջ առաջանում են ծանծաղուտներ, կղզիներ, իսկ գետա-
փերում՝ բերվածքներ:

Առցադաշերը լեռներից ցած սահելիս իրենց հետ
շատ սարեր, ավագ և կավ են տանում: Վերջապես նրանք
հալվում են և թողնում են սառցի բերվածքներ՝ կլորացրած
քարեր, ավագ, կավ:

Այսպես՝ բազմաթիվ դարերի ընթացքում ջրի աշխա-
տանքի հետևանքով յերկրի մակերեսը ի խատ փոխվում ե:

ԶՐԻ ԱԽՏԱՆՔՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԹՅԱՆ ՄԵՋ

Կար ժամանակ, յերբ մարդն իր անտեսության մեջ
աշխատանքի համար զործածում եր սիայն ընանիկ կեն-
դալիների և իր սեփական ուժը: Այն ժամանակ մարդը
միայն կենդանի շարժիչներ եր գործադրում աշխատանքի
համար:

Բայց շատ հին ժամանակներից սկսած արդեն մարդը
տնտեսության մեջ աշխատանքի համար ընտանի կենդա-
նիների և իր սեփական ուժը սկսեց փոխարինել ընական
ուժերով: Կենդանի շարժիչների փոխարին մարդն սկսեց
գործադրել ջրի, բամու և հետո ուրիշ շարժիչներ:

ԶՐԱՅԻՆ ՇԱՅԻՖԻՉՆԵՐ

Ամենապարզ ջրային շարժիչը ջրանիվն ե (Ակ. 33):
Որինակ՝ գյուղական ջրանցքներում ջրանիվն են գործա-
ծում: Ջրանիվի վրա թափվում ե ջուրը դրանից անիվը

սպառաւ զոկոմտեկոց տուց դով գ քոխմե տմի տմզ
բրամուսմիզը յ Ատ բրամիզը զ բովք չսի գ զբարտեմա-
կեղլք մահցազբա մոգեսմազը ։ Աղամակամակը զ պիտու-
մագոցը, նցինաստի տմի վմեգոցք պիկթ շըտ պակառ

ողմգողամտօնման և ողմգոկմմտֆ վետմեղոցի գ բախ
-հմսեաց իսմգմուտնմսեաց մուսթրազոկմակդլգ եղցո՞
-տի վիսպիսի տմի փագե իսպիսի թ 9661 գ քախեսատի
տղ մդ ոցոմբակմակդլգ ոցոմբ վիսպիսի մումտկմակդլգ
մսեչտուցբառ բառ-ԱՆՈՊ ուղոկտողաբառ ովճրի ԿՇԵՎԱ


Հպատակամակացներ իւղթարեամ ժողովը խսյանաւու վովոցն

Ամպղողղթթքը առ պատշաճնեան յրապի դ ձգր պարմե
մկամթթաղակամակիզելզ և զարմը պայմանակազմակ
դ զվարացանթթառապատմակ ուղարկացամակ իսպանակազմակ
մաք դ բախինեան մուսամակամակիզելզ իսպանակազմակ
առ յրախնեան գ ուսամթթաղակամակիզելզ յրամպայտակամա
կիզելզ և զարտապնա և սմակ մզէ պարկամակիզելզ զմիտմէ զյ
չսի նոյոմն նոյոմը : Ձգր պանթթաղակ ուղակամիսեաք մզէ
զպարա ուսամթթաղակամակ զպնա պարմեաստ ուղակամակ


ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻՑԿԱՌՎ ԴՎՅՈՒՅՆ յԳՅ

ուսմբառոգտադա գ յուսօմնեատանս ոչնմոք թրու վմշ և իմփաթ
մբառմբառնոգման վզվմուսա գ վիվումն ուղարկուիլ

Քըմունկա Առուսիք կով գոյ պահարմու միզյ Բվմգովից
առ ևս դ ջղս վիվու ուսմք դ քախմն միվու կդը ճվմ
ճասողնամելով, Աժքահմն վովմմատ ովհումք թէ կդ



Հիվանդների մասին



տենտեսմց դ բախինգապափ Յվլյումոյ Արտաքտու Խստցառեն
Նմո Պվմզմտմթենտեսմց դ քտմենտվր Միկզամց ։ Պ յրախտեն

Ալդ ելեկտրակայանում ստացված ելեկտրականությունը հաղորդալարերով հաղորդվում է բազմաթիվ ֆաքտիկների, գործարանների, կոլտնտառությունների և խորհարվածությունների:

Դսեպրոդեմն այնքան աշխատանք պիտի կատարի, վորքան ինն վոլտովի ելեկտրակայաններ միամին կարող են կատարել:

Խորհրդային կառավարության պլանի համաձայն մեզ մոտ պետք է կառուցվեն ավելի և հզոր ջրային ելեկտրակայաններ վոլտա և Անգարա գետերի վրա:

Այսպես՝ մենք հաղթահարում ենք բնության ուժերին և նրանց ծառայեցնում ենք մեր սոցիալիստական շինարարությանը:

ՇՈԳԵՇԱՐԺԻՉՆԵՐ

Մարդն իր անտեսության մեջ ոգտագործում է վոչ միայն թափվող ջրի ուժը, այլ և շոգին ուժը՝ շոգեշարժիչների միջոցով:

Վորպեսզի հասկանալի լինի, թե շոգին ինչպես ե աշխատանք կատարում, մի այսպիսի փորձ անենք:


Փորձանոթի ^{1/4}-ը լցնենք ջրով և բերանը խըցանով փակենք: Փորձանոթն ամրացնենք և նրա մեջ ջուրն սկսենք լեռացնել: Վորոշ ժամանակի հետո խցանը շաշյունով դուրս կթռչի փորձանոթի միջից: Ի՞նչ կատարվեց:

Յերբ մենք ջուրը լեռացնում ենք, նա դառնում է շոգին Շոգին քանի գնում շատանում ե և կուտակվում է փորձանոթի մեջ յեռացող ջրի վրա: Փակ փորձանոթից նա դուրս գալու տեղ չունի: Նա սեղմված ե: Սեղմված շոգին ներս մից ճնշում ե փորձանոթի պատերին և խցանին: Սեղմված շոգում ճնշման տակ խցանը փորձանոթից դուրս է թռչում:

Ահա սեղմված ըօգու ալդ ուժն ե, վոր ոգտագործում են շոգեմեքենաների մեջ:

Շոգեմեքենա հսարելու վրա շատերն են աշխատելքայց ալդ մեքենաներն սկզբում շատ թերություն են ունեցել: Միայն մեղնից 170 տարի առաջ անգլիացի Ռեալտն եր, վոր ալդ մեքենան կատարելագործեց: Դրանից հետո յե, վոր սկսեցին շոգեմեքենան գործադրել տնտեսության մեջ: Շոգեմեքենայի գյուտից հետո սկզբում հսարեցին շոգենավը և հետո շոգեքարշը: Ամեն աեղ սկսեցին շոգեմեքենաներ գործադրել:

Սակայն ինչպես ե շոգին շոգեմեքենայի մեջ աշխատանք կատարում: Շոգեմեքենայի մեջ կա ջրով լի կաթսա: Ջուրը կաթսայի մեջ շատ ուժեղ տաքացնում են: Ջուրը յեռում ե: Շատ շոգի յե առաջնում: Շոգին խողովակով մանում ե գլանի մեջ: Այժմ դիտեցեք 35-րդ նկարը: Գլանի մեջ կա մխոց, նա պինդ հպվում ե գլանի պատերին: Սեղմված շոգին ուժով ճնշում ե մխոցի վրա և նրան հրում



Նկ. 35. Ինչպես շոգին ճնշում է մխոցի վրա և անիվը պատեցն ում: Կ փոփոխակի լեռբեմն առաջ, լեռբեմն յետ: Մխոցը շարժվում ե: Բայց մխոցը միացրած է անիվին: Այդ պատճառով շարժումը փոխանցվում է անիվին և անիվը պատվում ե: Այսպես շոգին շոգեմեքենայի մեջ աշխատանք է կատարում:

Շոգեշարժիչները մեր ժողովրդական անտեսության մեջ մեծ նշանակություն ունեն: Նրանք գործադրվում են շոգեշարժմաների և շոգեմեքենաների մեջ: Նրանք աշխատում են մեր բազմաթիվ ֆաքտիկների և գործարանների մեջ, խորհանանասությ մներում և կոլտնտեսություններում:

III. 0 f

ՅԵՐԵ պայծառ և արևոտ որը վերև ենք նայում մենք, մեր վերևում տեսնում ենք կապույտ յերկինքը: Կապույտ յերկինքն արեից լուսավորված ողն ե: Ողը յերկրագնդի մակերեսը ծածկում է 700 կիլոմետրից վոչ պակաս հաստության շերտով: Շրջապատում ամեն տեղ ող կա:

ԱԴՐ ՏԵՂ Ե ԲՈՒՆՈՒՄ

Ողբ թափանցիկ և անգույն զար ե, այդ պատճառով
ել մենք ողբ չենք տեսնում:

Փորձ. Վերցնենք դատարկ բաժակը և շուռ տված իջեցնենք ջրով լիբը լայն ամառի մեջ։ Զուրը բաժակի մեջ չի մտնում, վորովհետև բաժակում ող կա։

Բաժակը մի փոքր թեքենք: Բաժակի միջից ողի բըշ-
տիկներ դուրս կթռչեն (նկ. 36): Ավելի շատ թեքենք
բաժակը, ավելի և ավելի շատ ող դուրս կգա բաժակից:
Ողը բաժակի մեջ իր տեղն ազատեց և նըս փոխարեն բա-
ժակի մեջ ջուրը մտավ: Ալզսես կարելի յե ողն այդ բա-
ժակից լցնել ջրով լիքը մյուս բաժակի մեջ: Այդ փորձը
ցույց ե տալիս, վոք ողը տեղ ե բռնում:



Նկ. 36. Աղբ դուրս և դավիս բաժանելից:

Ասում են «դատարկ» բաժակ, «դատարկ» շիշ, «դատարկ» դույլ։ Այս ինչ, իսկապես նըստարկ չեն, այլ լցված են ողով։

ԱՐԵ ԾԱՆՐԱԽԹՑՈՒՆ ԱԽՆԻ

Պինդ և հեղուկ մարմինները ծանրություն ունեն: Ողնել ծանրություն ունի արդյոք: Վորպեսզի այդ բանը պետք է, կարելի յէ հետեւալ փորձը կատարել:

Փորձ. Վերցնենք բարակ պատերով մի մեծ սրբակ, որը պահպան է պիտի փակենք խցանով, դնենք կշեռքի նժամը բարակ և հավասարակշռենք: Սրբակը կշեռքի վրայից վերցնենք, խցանը հանենք և սրբակը տաքացնենք սպիրտայնենք, լուսը բարձրացնելիս ընդարձակվում է և բոցի բոցի վրա: Աղը տաքացնելիս ընդարձակվում է և նրա մի մասը սրբակից ուրս է գալիս, թեև մենք այդ չենք սկասում: Տաքացրած սրբակը պիտի փակենք նույն խցանով և դնենք կշեռքի նույն նժամը վրա: Սրբակը թեթե փացել է, վորովնեան տաքացնելիս նրա միջից ողի մի մասը գուրս է յեկել: Ուրեմն ողը ծանրություն ունի:

Ողբ ջրից անհամեմատ թեթև եւ Մեկ լիտրը
4° բարեխառնությամբ կշռում է 1000 գրամ, մեկ լիտր
ողբ նույն պարմաններում կշռում է միայն մոտավորա-
պես $1\frac{1}{3}$ գրամ։ Այդ պատճառով տառմ են, վոր ողբ թե-
թեվ եւ Սակայն ողբ, ինչպես քննոքյան բոլոր մասմին-
ները, ունի ծանրություն։

ԱՐԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ե ՑԵՎ ՍՈՒԶԳԱԿԱՆ

Ողը կարելի յե սեղմել։ Յեզ փորքան ավելի ուժով
սեղմենք, ոդն այնքան ավելի կաշխատի ընդարձակվել։ Այս
հատկությունը կոչվում ե առաձգականություն։ Վորպես-
դի ծանոթանանք ոդի սեղմելիությանը և առաձգակա-
նությանը, մի այսպիսի փորձ կատարենք։

Փորձ. Վերցնենք մի լայն ապակե խողովակ՝ մոտավորապես 50 սանտիմետր յերկարությամբ։ Ալդ խողովակի մի ծայրը մացնենք կարտոֆիլի հաստ կտորի մեջ։ Կարտոֆիլից կլորակածն մի կտոր կմնա խողովակի մեջ և պինդ կփակի նրա անցքը։ Նույն ձեռվ կարտոֆիլի կլորակ կտորով փակենք նաև խողովակի մյուս ծայրը։

Այժմ մի ձեռքով բռնենք խողովակը, իսկ մյուս ձեռքով մի փայտե ձող։ Ալդ ձողով կարտոֆիլի կլորակը հրենք դեպի խողովակի ներսը։

Կարտոֆիլի կլորակը դեռևս խողովակի կեսը չհրած յերկը ըստ կլորակն արդեն խողովակից գուրս և թռչում։ Մեր ողալին ատրճանակը կրակում է (նկ. 37)։



Նկ. 37. Ողալին ատրճանակ։

Կրկնենք այս հետաքքրական փորձը։

Բայց ինչո՞ւ յե ողալին ատրճանակը կրակում։

Յերբ կարտոֆիլի կլորակը խողովակի միջով շարժում ենք առաջ, մենք ողը սեղմում ենք։ Յերկու կլորակների միջև մնացած ողի քանակը նույնն է, բայց նա այժմ ավելի փոքր տեղ է բռնում։ Մենք ողը սեղմեցինք։


Բայց սեղմած ողն առածգական է, նա ձգում է ընդարձակիլու։ Նա ձնշում է գործ գնում յերկու կողմերի, կարտոֆիլը թե մեկ և թե մյուս կլորակների վրա։ Ողի ձնշման տակ կարտոֆիլի ակտու կլորակն աղջուկով գուրս և թռչում է ինչու յե ողալին նաև շատրվան ատրճանակը կրակում։



Ողի սեղմելիությունն ու առանգականությունն ողւ տաղործում են առելում կամ սեղմակի, որինակ, ճընշված ողով գործում են յերկաթուղու և տրամվայի վագոնների արգելակները։ Ճնշված ողն են ողագործում շինարարության մեջ ներկը շաղ տալու համար։ Ճնշված ող նարարության մեջ ներկը շաղ տալու համար։ Կա ավտոմոբիլների շինարարի մեջ։ Նրա առածգականության հետահանքով մեղմանում են այն ցցումները, վոր ավտոմոբիլն սահմանում է շարժվելու ժամանակ։ Ճնշված ողով մոբիլն սահմանում է շարժվելու ժամանակ։ Ճնշված ողի առածգականության շնորհիվ և գնդակը վերև թռչում և աղալու ժամանակ սահմանական հարվածներից։

Առաջարկարյան. Կատարեցիք ակ. 38-ում ցույց տրված փորձը, բերանները գլուխ խողովակին և շնչ մեջ ող տրված փորձը, բերանները գլուխ խողովակին և շնչ մեջ կորմ քաշեցիք։ Սեղմած փշեցնք ու արագությամբ շիշը մի կորմ քաշեցիք։ Սեղմած փշեցնք մաշում և շնչ մեջ զանված ջրի վրա և ջուրը շատրվանի պիս լիցու և ցայտում։

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՂԻ ԸՆԴԱՐՁԱԿԵԼԻ ՅԵՎ ՅՐՏԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՍԵՊԱՎԵԼԻ



Նկ. 38. Ողը տաքացնելիս ընդարձակվում է, սառեցնելիս սեղմվում։

Ողն ել մյուս մարմինների նման տաքություն կաց ընդարձակվում է և ցրառ թյունից սեղմվում է։ Ողի այդ հատկություններին կարելի յե ծանոթանակ հետեւյալ փորձերով։

Փորձ 1. Վերցնենք բարակ պատերով մի սըրփակ կամ չիշ։ Նրա բերանը պինդ փակենք մի այնպիսի խցանով, վորի

մեջ ապակե մի յերկար խողովակ և հադցըրտծ։ Այդ խողովակի ծայրը դնենք ներկած ջրով լի բաժակի մեջ։ Սրվակը կամ շիշը տաքացնենք ուղղակի մեր ձեռքի ջերմությամբ։ Սրվակի միջից խողովակի միջով ջրի մեջ դուրս կդան ոդի բշտիկներ։ Դրա պատճառն այն ե, վոր ոդը տաքացնելիս ընդարձակվում ե (նկ. 39)։

Փորձ 2. Այժմ սրվակի ողը սառեցնենք։ Դադարեցնենք ձեռքով տաքացնելը և մատներով բռնենք միայն նրա խցանից։ Վորպեսզի սրվակի ողն ավելի շուտ սառի, կարելի յե նրա վրա դնել թրջած սառը փալաս։ Այժմ ջուրը կակախ բաժակից բարձրանալ խողովակի մեջ։ Դրա պատճառն այն ե, վոր ոդը սառեցնելիս՝ սեղմիում ե։

ՈՒՂ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏ Ե ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հայտնի յե, վոր ձմեռը բնակարաններում լուսամուտներին կրկնափեղի են դնում։ Այդ նրա համար են անում, վոր սենյակի ջերմությունը պահպանեն։ Բայց ավելի հեշտ չեր լինի յերկու փեղկերի փոխարեն մեկ հատ հաստ ապակով փեղկ դնել։ Կարող ե այսպիսի հարց ծագել։

Բանից գուրս ե գալիս, վոր այդ ձևով սենյակի ջերմությունը պահպանել չի հաջողվում։ Հարկավոր ե, վոր յերկու փեղկերի արանքում ոդի շերտ լինի։ Դրա շնորհիլ սենյակի ջերմությունն ավելի լավ ե պահպանվում։ Դրա պատճառն այն ե, վոր ոդը ջերմությունը վատ ե հագործում։

Այդ բանում կարելի յե համոզվել նետիյալ փորձով։

Փորձ 1. Վերցնենք յերկու միանման ապակե բաժակ, մեկը հաստ, իսկ մրուսը՝ բարակ պատերով։ Յերկուսի մեջ ել լցնենք միանման տաք ջուր և բերաններն ապակով ծածկենք։ Յերկու բաժակն ել դնենք կողք-կողքի։ Բայց բաժակներից մեկը դնենք սեղանի վրա, իսկ մյուսը՝

ապակե բանկայի մեջ՝ լուցկու դատարկ տուփի վրա։ Այդ գեպքում պետք ե այնպիսի բանկա վերցնել, վորի պատերի հաստությունը և այդ բաժակի պատերի հաստությունը միասին հավասար լինեն առաջին բաժակի պատի հաստությանը։ Այստեղ տարբերությունը միայն ոի բան։ մեջ ե, տաք ջրով լի յերկրորդ բաժակն ամեն կողմէց շրջապատճ և ոդի այն շերտով, վոր գտնվում ե բաժակի պատերի և բանկայի պատերի միջև։ Իսկ ինչ նշանակությունն ունի նաև ոդի այն շերտը, վոր գտնվում ե յերկու փեղկերի միջև։

Վորոշ ժամանակից հետո ջերմաչափի միջոցով կամ մինչև անգամ ուղղափեղի շոշափելով կարելի լի հաստատել վոր բաժակների ջրերը միատեսակ չեն սառել։ Յերկրորդ բաժակի ջաւրն ավելի քիչ ե սառել քան առաջինի ջուրը վորովհետև նա պաշտպանված եր սառելուց նաև ոդի այն շերտով, վոր գտնվում ե բաժակի և բանկայի պատերի միջև։ Այդ ցուց ե տալիս, վոր ոդը ջերմությունը վաս ե հաղորդում։ Սենյակի ջերմությունը պահպանելու համար ճիշտ միենույն նշանակությունն ունի նաև ոդի այն շերտը, վոր գտնվում ե յերկու փեղկերի միջև։

Ճիշտ նույն ձևով ել մեր հագուստը պահպանում ե մեր մարմնի ջերմությունը, մանավանդ մորթեղեն հագուստը, վոր մենք հագնուած ենք։ Մարմնի և հագուստի միջև գտնվում ե ոդի շերտ, և հագուստով մենք մեզ տար ենք զգում, վոչ թե այն պատճառով, վոր նա մեզ տարցնում ե, այլ վորովհետև հագուստի մեջ և հագուստի ու մարմնի միջև գտնված ոդը պահպանում ե մեր մարմնի ջերմությունը։

Վորպեսզի այդ ավելի պարզ լինի, կարելի յե տարբել հետեւյալ փորձը։

Փորձ 2. Վերցնենք յերկու միատեսակ շշեր և լցնենք միաչափ տաք ջրով և խցաններով փակենք։ Շշերից մեկը փաթաթենք մորթով կամ շորով, մյուսը դնենք նրա


կողքին՝ առանց վաթաթելու։ Վորոշ ժամանակից հետո կնկատենք, վոր մորթով կամ շորով վաթաթած շաբաթը ավելի քիչ ե սառել, քան մյուս շաբաթը։ Պատճառն այն է, վոր շաբաթը կամ շորի միջև գտնված ողը զերմուրյունը վաս է նաղորդում։

Դիտողություններն ու փորձերը մեզ համոզում են այն բանում, վոր ողը զերմուրյունը վաս է նաղորդում։ Ողի այդ հատկությունն ոգտագործում են տնտեսության մեջ և կյանքում։

ՎՐՈՒ ՈԴՆ Ե ԱՎԵԼԻ ԹԵԹԵՎ—ՏԱ՞Ք, ԹԵ ՍԱՌԸ

Յերբ ողը տաքանում և ընդարձակվում է, նա ավելի թեթեվանում և բարձրանում է վերև։ Այսպես որինակ յերբ վառարանը վառվում է, նրա մեջ տաքացած ողը ծխի հետ միասին, յերբեմն ել կայծերի հետ միասին խողովակով բարձրանում է վերև։ Խավթի վառած լամպի մեջ տաքացած ողը լամպի ապակու միջով նույնպես բարձրանում է վերև։ Յեթե լամպի ապակու մեջ ծխախոտի թրղթի կտորներ գցենք, նրանք վոչ թե բոցի վրա կը նկնեն, այս տաքացած ողի հետ կբարձրանան։ Այս բոլորը մեզ ցուց են տալիս, վոր տաք ողն ավելի բերեվ ե բան սառն ողը, այդ պատճառով ել նա բարձրանում է վերև։

Փորձ։ Դասարանի ուղն առհասարակ ավելի տաք



Նկ. 40. Բաց դռան մոտ փորձ։

քան միջանցքինը։ Մի փոքր բաց անենք դասարանից գեղանի միջանցքը բացվող դռուրը և մոմը պահենք հատակին մոտիկ (Նկ. 40)։

Մոմի բոցը կթեքվի դասարանի կողմը։ Այդ ցույց ե տալիս, վոր սառն ողը, վորպես ավելի ծանր, ներբենից ե դալիս։

Վառած մոմը բարձրացնենք և պահենք բարձրում, դռան վերին շրջանակի մոտ։ Այժմ մոմի բոցը կթեքվի միջանցքի կողմը։ Այդ ցույց ե տալիս, վոր տաք ողը, վորպես ավելի թեթև, դնում ե վերենից։

Յեթե մենք բաց անենք միջանցքից գեղանի դուրս բացվող դռուրը և միենուն փորձը անենք մոմի հետ, այն ժամանակ միենուն սանը կատարվի։ Այս բոլորը ցույց ե տալիս տաք և սառն ողի տեղափոխությունը։

Էնության մեջ անընդհատ տաք և սառն ողի տեղափոխություն ե կատարվում։ Արել տաքացնում ե գետինը։ Սրանից տաքանում ե ողը։ Տաքացած ողը, վորպես ավելի թեթև՝ բարձրանում է վերև, իսկ նրա տեղը հոսում ե սառն ողը։ Այսպես տաքանալու և ցրտելու շնորհիվ բնության մեջ ողի տեղափոխություն ե կատարվում։

Ա.Բ.Ս.ԶԻՆ ՈՂԱՉԱԽԻՆԵՐԸ

Բարձրանալ ողի մեջ, թռչել ողում, — մարդկության վաղուցվա ցանկությունն ե յեղել։ Վաղուց մարդիկ ձրդտել են զրան։ Բայց առաջին անգամ մարդիկ ունի մեջ բարձրացան այն ժամանակ, իերը իմացան, վոր տաք ողն ավելի թեթև ե քան սառն ողը։

Մեղնից 150 տարուց ավելի առաջ ֆրանսիացի մի փորձիկ քաղաքում Մոնդոլֆյան լեռայըները թեթև գործվածքից մի մեծ գունդ պատրաստեցին՝ վրայից թուղթ փակցը ըրած։ Նրա տակը խարույկ փուեցին և գունդը լցրեցին

տաք ողով։ Յերբ բաց թողեցին այն թոկը, վորով գունդը պահել ելին, նա բարձրացավ ողի մեջ և թռավ։ Այդ առաջին ողապարփկն եր։

Մոնղոլիկ յեղայրները զրանից հետո պատրաստեցին հատուկ մի այնպիսի գունդ, վորով մարդիկ պիտի բարձրանալին ողի մեջ։ Այդ տաք ողով լցրած մի մեծ գունդ եր (նկ. 41)։

1783 թ. նոյեմբերի 23-ին Փարիզի մեծ հրապարակի վրա, բազմահազար մարդկանց ներկայությամբ, ողապարփկը պատրաստ եր թոշելու։ Յերկու գիտնականները նկ. 41. Առաջին ողաչուտեղավորփեցին նրա մեջ։ Թոկն արհերի ողապարփկը։ ձակեցին։ Ժողովրդի խանդավառ բայականչությունների տակ ողապարփկը մարդկանց հետ միասին արագ բարձրացավ և թռավ ավելի բարձր և բարձը։ Շուտով նա բոլորովին անհետացավ դիտողների աշքից։ Բայց ի՞նչ պատահեց ողապարփկի և նրա մեջ զարնված մարդկանց հետ։

Տաքացած ողը գնդի մեջ հետզհետե սառեց, գունդը ծանրացավ և վորոշ ժամանակից հետո իջավ գետին։

Դա մարդկանց առաջին թոխքն եր ողապարփկով։

Դրանից հետո շատերն սկսեցին տաք ող լցրած ողապարփկով թոխքներ կատարել։ Բայց այդ թոխքները հաճախ աղետով ելին վերջանում։ Ողը տաքացնելու համար այդ գնդերի վրա կրակարաններ ելին սարքում և կրակ վառում։ Դրանից ել հաճախ ողապարփկների վրա հրդեհներ ելին պատահում։


Բայց շուտով հնարեցին մի այնպիսի ողապարփկ, վորի



մեջ արդեն վոչ թե տաք ող ելին լցնում, այլ մի գաղ վոր ողից թեթև ե։ Այդպիսի ողապարփկներ մեր ժամանակ ել են գործադրովում։

Ո Գ Ա. Պ Ա. Ը Ւ Կ

Ժամանակակից ողապարփկի մեջ լցնում են թեթև գաղ ջրածին, վորը համարյա չի անցնում թաղանթի միջով։ Ողապարփկի թաղանթը վրայից ծածկված է ամուռ ցանցով։ Նրա ներքեցից ցանցին ամրացրած է մի զամբյուղ վորի մեջ մարդիկ և նրանց անհրաժեշտ բոլոր իրերն են վորի մեջ մարդիկ և նրանց անհրաժեշտ բոլոր իրերն են տեղավորվում։ Այդ գունդը բարձրանում է, վորովհետև ողից թեթև է։



Նկ. 42. "CCCP" սորտատուտաթը

Ողապարփկը կարող է շատ բարձրանալ։ Սակայն սովորական ողապարփկով աերստատով, մարդիկ կարողացել են բարձրանալ միայն մինչև 10800 մետր բարձրություն։ Բայց այդ բարձրության վրա ել ողն արդեն անքան նոսե, վոր նրա մեջ մնալը կյանքի համար վտանգավոր է։

Վորպեսզի հնարավոր լինի մեծ բարձրության հասնել, անհրաժեշտ է մի առանձնահատուկ ողապարփկ՝ սորտատուտաթ (նկ. 42)։ Սորտատուտաթը մի հսկայական ողապարփկ է, լցրած նույն թեթև գաղ զով՝ ջրածինով, ինչպես վոր սովորական ողապարփկներն են լցնում։

Սորտատուտաթի ներքեվում կա վոչ թե բաց զամբյուղ այլ պինդ փակած գնդաձև մետաղե գոնդոլի մեջ

գտնված մարդիկ շնչում են իրենց հետ հատուկ գործիք՝ ներով վերցրած թթվածինով:

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում, առաջին անգամ սուրատուստատ պատրաստեցին 1933 թվին: Սեպտեմբերի 30-ին, պարզ առավոտյան «СССР» ստրատոստատը յերեք քաջարի հետազոտողներով բարձրացավ Մոսկվայի վրա: Չորս ժամից հետո նա հասավ 19,300 մետր բարձրության: Արդարիսի բարձրության գեռես վոչ վոք չեր հասել ամբողջ աշխարհում: Ողաչուները ստրատոստատից ուղիղով ուղղությամբ տարած եյին տալիս դեպի յերկիր ողի բարձրունքներում տարած իրենց հաղթանակի մասին: Յերեկոյան գետ ստրատոստատը հաջողությամբ իջավ Մոսկվայից վոչ հեռու:

«СССР» ստրատոստատի թոփշքը մի խոշոր դեպք երանող աշխարհի համար՝ վորպես խորհրդացին գիտության և տեխնիկայի հանդիսավոր հաղթանակը:

Ո Դ Ա Ն Ա Վ

Ողանավը կամ դիրիժաքը յերկարավուն ձեւ ունի: Արդիսի ձեռվ նա հեշտությամբ կարողանում է ողը ձեղքել (նկ 43):

Դիրիժաքի մեջ լցված եւ ջրածին դազ: Դիրիժաքը ներքեւում ամրացված եւ գոնդոլ, վորի մեջ մարդիկ են տեղափորվում: Դիրիժաքի վրա կան մոտորներ և նըստով կարելի յերեկավրել:

Ողանավով կարելի յեր շատ մեծ թոփշքներ կատարել, 1926 թ. հայտնի գիտնական ճանապարհորդ Ամունդսենը դիրիժաքով թոփշք կատարեց դեպի Հյուսիսային բևեռ: Դիրիժաքը 71 ժամ ողում մնալուց հետո հաջողությամբ վերադարձավ:

Մինչև վերջին ժամանակներս մենք դիրիժաքներ չունեյինք: Բայց այժմ մենք կառուցում ենք և ունենք մեզ


դիրիժաքները: Նոանը մեզ անհրաժեշտ են թե ժողովը գույքան և նախեսության և թագավորության համար: Դիրիժաքը մեզ ուներ մեզ ուներ մեր յերկիրը կապիտալիստներից վրա հարձակվելու համար, վորոնք ատում են մեր Միությունը և պատրաստ վում են մեզ վրա հարձակվելու:

Այրացնենք մեր յերկիրի պաշտպանությունը:


Ք Ա Մ Ի

Ողը յերբեք հանգիստ գրությամբ չի լինում: Նա միշտ շարժվում է: Անա ողի այդ շարժումն եւ քամին:

Քամին փշում եւ զանազան ուղղությամբ: Հարավի, փշում եւ նարավային քամին, հյուսիսից՝ հյուսիսային քամին և այլն: Քամու ուղղությունն իմանում են մի հառուկ գործիքի միջոցով, վոր կոչվում են ողմացույց (նկ 44):



Նկ 44. Հողմացույց: Յերկիրի վրա պատահում են նաև փո-



Նկ 43. Դիրիժաքը:

Ք Ա Մ Ի

Կիսում եւ թուլ քամի, վոր հազիվ ծառերի տերեներն եւ շարժում: Ուժեղ քամին տատանում եւ ծառերի խոշոր ճռւղերը: Նա յեր շատ վոռնում եւ լուսամուտի յետելում: Լինում են նաև այնպիսի ուժեղ քամի, վոր ճռնում եւ ծառերը և մարդուն խանգարում եւ քարելու, Դա մրրիկն եւ:

Յերկիրի վրա պատահում են նաև փո-

բորիկներ, Փոթորիկը գետնից արմատախիլ եւ անում ծառները, քանդում եւ տները և կատարյալ ավերմունք եւ առաջցնում։ Փոթորիկը սոսկալի աղետ ե։ Փոթորիկներ շատ հաճախ պատճում են հարավային լերկըներում։ Մեզ մոտ նրանք շատ սակավ են պատճում։

Թույլ քամին մի վայրկյանում 4-5 մետր եւ անցնում, ուժեղ քամին՝ 11-13 մետր, իսկ փոթորիկը՝ սարսափելի արագությամբ, մի վայրկյանում 35 մետրից ավելի։

Քամին ընության մեջ մեծ աշխատանք եւ կատարում։ Նա ապարների քայլայումից առաջացած ավազն ու կավը ըշում, տանում և կուտակում եւ զանազան տեղերում։ Այսպես՝ ծովագիերում առաջանում են ավազի դյուներ, իսկ անտապատներում ավազի բարխաններ։

Շարժվող ավազները մնասում են տնտեսությանը, այդ պատճառով նրանց դեմ պայքարում ենք։ Այդ նպատակով ծառեր և թփեր ենք անկում, վորոնք ավազների շարժման առաջն առնում են։

ՔԱՄՈՒ Ս.ՇԽԱՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ


Շատ հին ժամանակների, մարդը հարկադրել եւ քայլուն իր տնտեսության մեջ աշխատելու։ Մարդը քամին ողտագործում եւ վորպես շարժիչ ուժ։

Դեռևս հին ժամանակներում մարդը հնարել եւ առաջասանավը։ Քամին փշելով ուղցնում եւ առաջաստը, և նավը շարժվում եւ ջրի վրայով։

Այսպես՝ քամին փոխարինում եւ թիավարողներին։


Նախկին ժամանակներում առաջաստանավերը մեծ ուշանակություն ունեին։ Այսպես, որինակ, Կոլումբոսն առաջին անգամ 1492 թ. առաջաստանավերով Յեվրոպա-ից Ամերիկա գնաց։ Նույնպես և առաջաստանավերով առաջին անգամ Մագելանն 1519 թվին գնաց աշխարհի

շուրջն ուղեվորություն կատարելու։ Յերեք տարի ովկիա-



Նկ. 45. Մագելանի նավը.


նուներում լողալուց հետո՝ Մագելանի հինգ նավերից միան մեկը վերադարձավ հայրենիք, ամբողջ յերկրագնդի շուրջ պատուած կատարելով (Նկ. 45)։



Նկ. 46. «Ճովարիչ»։


Յոգեմեքենալի գլուխից հետո հնարեցին «Հրենավը»:
Սկզբում շոգենավն այդպես եղին անվանում: Յեվ առաջաստանավերն իրենց տեղը զիջեցին շոգենավերին: Բայց մեր ժամանակում ել առաջաստանավեր կան: 46-րդ
Նկարում դրված ե մեր քաջարի «Տովարիշչ» առաջաստանավը: «Տովարիշչը» շատ նավարկումներ ե կատարել ովկիանոսներով:

Հատ հին ժամանակներից մարդը քամու ուժն ոգտավործում ե նաև ցամաքի վրա: Արդեն հնում գոյություն ունեցին նողմաղացներ (նկ. 47):
Քամին պտտացնում ե հողմաղացի թևերը: Այդ շարժումը փոխանցում ե աղացաքարին: Աղացաքարը հատիկներն արում ե և դարձնում ալուրը:



Նկ. 47. Հողմաղաց:

Վերջին ժամանակներս մեզ մոտ կառուցվում են հղոր նողմաշարժիչներ (նկ. 48):
Քամին պտտացնում ե շարժիչի թևերը: Այդ շարժումը փոխանցում ե այն մեքենային, վորի մեջ առաջանում ե ելեկտրականություն: Ելեկտրականությունը հաղորդակարելով հաղորդվում է շարժման մեջ և գնում դադրաներն ու մեքենաները:



Նկ. 48. Հողմաղարժիչ:

Այսպիս՝ քամու ուժն ոգտագործվում ե ժողովրդական տնտեսության մեջ:

90


ԻՆՉԻՑ Ե ԲԱՂԿԱՅՈՒՄ ԱԴՐ:

Այն հարցը, թե ինչից ե բաղկացած ողը, առաջին անգամ գիտնականները բացատրեցին սրանից 150 տարուց մի փոքր առաջ: Գիտնականները հաստատեցին, վոր ողը բաղկացած ե գլխավորապես յերկու գազից: Այդ գազերից մեկը պահպանում ե ալրումը և կոչվում ե թրվածին: Մյուս գազը չե պահպանում այրումը և կոչվում ե ծին: Ողի մեջ կա նաև քիչ քանակությամբ ածխաթթու գազ:

Սկզբում ծանոթանանք թթվածնի և ածխթթու գազի հատկություններին և հետո փորձով կուսումնասիրենք ողի բաղադրությունը:

ԹԹՎԱԾԻՆ

Ողի մեջ թթվածինը խառնված ե ազոտի հետ, այդպատճառով ողից մաքուր թթվածին ստանալը շատ դժվար է: Մենք ուրիշ միջոցով կստանանք թթվածին (նկ. 49):



Նկ. 49. Թթվածին ստանալը:

Փորձ: Փորձանոթի մեջ դնենք կես զդալ այն նյութից, վոր կոչվում ե մանգանաթթվական կալիում:

Փորձանոթի բերանը խցանով փակենք և խցանի մեջ ամրացնենք ապակե կուրացրած խողովակի: Այդ խողովակի աղատ ծալըն անցկացնենք ջրով և բաժակի տակը, վոր շուռ տված ձևով դրված և ջրով լիքը մի լայն աճանի նառակին:

Զգուշությամբ փորձանոթը տաքացնենք սպիրոտայտոցի բոցի վրա:

Սկզբում խողովակի միջով ջրի մեջ դուրս կղան ողի բըշիկներ. իսկ հետո սկսում են դուրս գալ բթվածնի բըշիկներ: Դրանք բարձրանում են ջրի մեջ և հետզհետե բաժակից դուրս են վանում այս:

Բաժակի մեջ, քանի գնում ավելի և ավելի շատ գազ և հավաքվում, իսկ ջուրն ավելի և ավելի քչանում եւ Յերբ գոզը բաժակից ամբողջ ջուրը դուրս ե վանում, մենք խողովակը բաժակի տակից հանենք և տաքացնելը դադարեցներ: Բաժակի բերանը տակից թղթով ծածկենք, ջրի միջից հանենք գազի հետ միասին, շուռ տանք և դնենք սեղանի վրա:


Այդ բաժակի մեջ մտցնենք դանդաղ ալրվող մարխը (փայտի կտոր), վորի ծալըն գեռես կայծ կա: Մարխը կրոցավառվի: Ուրեմն բթվածինը պահպանում ե այրումը: Յեվ պետք ե ասել, վոր մաքուր թթվածնի մեջ մարխն ավելի պահան և ավելի ուժեղ ե այրվում, քան ողի մեջ: Ուրեմն բթվածինը ուժեղացնում ե այրում:

Թթվածին անհրաժեշտ է ընչառության համար: Յեթե վորեն կենդանի, որինակ՝ մուկը, դնենք բանկայի մեջ, վորտեղ թթվածին չկա, այն ժամանակ նա շուտով կմեռնի: Այնպես ել մարդն առանց թթվածնի չի կարող ապրել: Հիվանդանոցներում ծանր հիվանդներին բժիշկները մաքուր թթվածին են տակիս շնչելու համար:

Ա.ԾԽԱ.Թ ԹՈՒ Գ.Ա.Զ

Ոդի մեջ, բացի թթվածնից և աղոտից, կա նաև ած-խաթթու գազ, թեալիտ շատ օքէ քանակությամբ:

Փորձ 1. Շշի մեջ դնենք կավճի սանը կտորներ և նրանց վրա լցնենք աղաթթվի ջրախառն լուծույթ: Շշի բերանն իսկուրն փակենք խցանով, վորի մեջ մտցրած և կորացրած խողովակի: Այդ գաղատար խողովակի ծայրն իջեցնենք ջրով լիքը բաժակի մեջ, ինչպես 50-րդ նկարում ցույց ե տրված: Խողովակից ջրի մեջ դուրս կթըռչեն գազի բշտիկներ: Այդ՝ ածխաթթու գազն ե անջատվում: Այդ նույնպես մի անգույն գազ ե:



Նկ. 50. Ածխաթթու գազ ստանալը:

Գաղատար խողովակի ծայրն իջեցնենք թափանցիկ կրաջրով լիքը բաժակի մեջ: Բաժակի կրաջուրը կտակի պըռտորել: Ուրեմն ածխաթթու գազը պըռտորում ե կրաջուրը:

Այժմ գաղատար խողովակի ծայրը մտցնենք «դատարկ» բաժակի մեջ և բաժակի բերանն ապակով ծածկենք: Խողովակի միջով ածխաթթու գազը դուրս ե գալիս և լցնում ե բաժակը, թեն մենք այդ բանը չենք տեսնում, վորովհետև նա անգույն գազ ե: Բաժակի մեջ մտցնենք վառած մարխը:

Մարխը կհանգչի: Բաժակի մեջ այժմ ածխաթթու գազ կա: Ածխաթթու գազը չի պահպանում այրումը:

Փորձենք ածխաթթու գազը մեկ բաժակից մյուս «դատարկ» բաժակի մեջ դատարկել: Այնպես անենք, ինչպես վոր ջուրն ենք դատարկում մեկ ածխանից մյուսը: Այժմ վառած մարխը մտցնենք այն բաժակի մեջ, վորտեղ առաջ ողն եք: Մարխը կհանգչի: Ուրեմն այդ բաժակում այժմ

ողի փոխարեն ածխաթթու գաղ և գտնվում: Վառած մարս
խը մտցնենք այն բաժակի մեջ, վորտեղ առաջ ածխաթթու
գաղն եր: Մարխը շարունակում է ալրվեր: Ուրեմն այդ
բաժակի մեջ այժմ ածխաթթու գաղի փոխարեն ող և
գտնվում:

Այսպիսով մենք ածխաթթու գաղը մեկ բաժակից
մյուսի մեջ դատարկեցինք, ինչպես ջուրը: Մենք այդ բա-
նը կարողացնք անել այն պատճառով, վոր ածխաթթու
գաղն ողից ավելի ծանր ե:

Ողում ածխաթթու գաղ ամեն տեղ կա: Բայց ամե-
նից շատ ածխաթթու գաղ բնակարանների ողում կա: Մա-
սնականդ ածխաթթու գաղ շատ և գտնվում այն սենյակում,
վորտեղ շատ մարդիկ կան հավաքված: Մեր դասարանում
եւ ածխաթթու գաղ շատ կա: Ափսելի մեջ թափանցիկ
կրածուր ցնենք և դնենք դասարանում: Շուտով մենք
կսկատենք, վոր ջրի յերեսին սպիտակ փառ բռնեց: Այդ
փառն առաջացավ այն ածխաթթու գաղից, վոր դասարա-
նի ողի մեջ և գտնվում: Զե՞ վոր ածխաթթու գաղը պըդ-
տորում և կրածուրը: Այսպիսով միշտ կարելի յե ճանա-
չել ածխաթթու գաղը:

Բայց ինչու բնակարանների ողում ավելի շատ ած-
խաթթու գաղ կա:

Փորձ 2. Վերցնենք մի փոքրիկ բաժակով պարզ կրա-
ծուր: Կրածրի մեջ փշենք մեր արտաշնչած ողը, ապակե
ջուր: Կրածրի մեջ ջանաչենք միջոցով: Բաժակի կրածուրը կը-
լիողովակի կամ ծղոտի միջոցով: Բաժակի կրածուրը կը-
պղառըվի: Ուրեմն շնչելիս մենք արտաշնչում ենք մեծ
քանակությամբ ածխաթթու գաղ:

Փորձ 3. Վառած մոմը յերկաթալարի միջոցով իջեց-
նենք բաժակի մեջ և բերանը ապակով ծածկենք: Մոմը
վառվում ե, բայց վորոշ ժամանակից հետո հանդչում,
վորովետեւ բաժակի մեջ գտնված ողի ամբողջ թթվածինը


ծախսվեց: Մոմը բաժակի միջից հանենք և բաժակի մեջ
լցնենք մի փոքր թափանցիկ կրածուր և թափահարենք:
Բաժակի ջուրը կոկորդ ողուրվելու մեջ առան ժաման
նակ ողի մեջ առաջանում է ածխաթթու գաղ:

Այժմ հասկանալի էն, թե ինչու բնակելի շնչքելու
ողի մեջ ածխաթթու գաղ շատ կա: Նա արտադրվում է
թե շնչառության և թե ալրան ժամանակ:

ՈՂԻ ԲԱՂԱԴՐԱԽՈՒՆԸ ԱՅՐՁԱԲԱՆՈՂ ՓՈՐՁ

Թթվածնի և ածխաթթու գաղի հատկություններին
ծանոթանալուց հետո կատարենք ողի բաղադրությունը
պարզաբանող մի փորձ (նկ. 51):

Փորձ. Մի ալյակե լայն ալյակի մեջ լցնենք թափանցիկ
կրածուր: Նոր վրա
դնենք մի խցան,
խցանի վրա ամբաց-
նենք մի փոքրիկ
փառած մոմ: Մոմը
ծածկենք մի շատ,
վորի հատակը կը ա-
րել ենք: Եշի ե-
րանը խցանով փա-
կենք:



Նկ. 51. Ողի բաղադրությունը
պարզաբանող փորձ:

Մոմը շարունա-
կում ե շատ մեջ վառվել, վորովիճետեղ ողի մեջ գեռնս թրթ-
վածին կա: Մոմի այրման ժամանակ թթվածինը ծախս-
վում է և առաջանում է ածխաթթու գաղ: Յերբ շատ մեծ
համարյա ամբողջ թթվածինն սպառվում է, մոմը հանդ-
չում է:

Մոմի այրման ընթացքում ստացված ածխաթթու գա-
ղը կանվում է կրածրից, այդ պատճառով ջուրը բարձ-

բանում ե շնի մեջ։ Այդ ժամանակ շնի մեջ բարձրացող ջուրը բռնում ե մոտավորապես ալնքամ տեղ, վորքան տեղ բռնում եր այրման ընթացքում ծախսված թթվածինը։ Շնի մեջ մնացած տեղը գլխավորապես բռնում ե ազոտը։

Ճշգրիտ փորձերով հաստատված ե, վոր ողի մեջ գտընալում ե յերկու դադ և վոր թթվածինը նրա $\frac{1}{5}$ մասից մի փոքր ավելի յե, իսկ ազոտը համարյա նրա $\frac{4}{5}$ մասն ե կազմում։

IV. ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Բոլորին ծանոթ ե ամպրոպի պատկերը։ Յերկինքը ծածկված ե սև ու մուժ ամպերով, անձրե ե թափվում, կայծակը փալատակում ե (նկ. 53), լսվում են վորոտի խլացնող հարվածները։

Ամպրոպը սնութիապաշտ մարդկանց մեջ յերկուող ե առաջացնում։ Հին ժամանակներում մարդիկ կարծում եին, թե ամպրոպը շանթաձիգ աստվածն ե ուղարկում։ Զայրանում ե աստվածը և վորոտ ու կայծակ ե թափում յերկրի վրա։

Մեր ժամանակներում տգետ մարդիկ կարծում են, թե ամպրոպին առաջանում ե նրանից, վոր Յեղիա մարդարեն յերկնքում կառքով զբունում ե և յերկրի վրա կրակե ոլաքներ, կայծակներ ե թափում։ Այդպիս ե արդուութ։

Ի՞նչ ե ԿԱՅԾԱԿՆ ՈՒ ՎՈՐՈՏԸ

1752 թ. ամառը ամերիկացի գիտնական Ֆրանկլինն լրովի ժամանակ զուրս յեկավ դաշտ և բաց թողեց նշանավոր «վոռանը»։ Նա վճռել եր իմանալ, թե ինչ ե կայծակը։

Ֆրանկլինի վոռանը շինված եր մի մեծ մետաքսե թաշկինակից և վերեսում ուներ մետաղե սրածալը ձողիկ։ Փոռանը բաց թողեց ամուը կանեփի թելով, վորի ծալը կապեց մետաղե բանալուց։ Բանալուն նույնպես կատել եր մետաքսե թաշկինակ, վորի միջոցով ֆրանկլինը բլունել եր իր վոռանը։

Յերբ ամպն անցնում եր վոռանի վրայով, ֆրանկլինը մատը մոտեցրեց բանալուն։ Բանալուց դուրս թուավ փոքրիկ կայծակ, ելեկտրական կայծ և թուլլ ճայթյուն լովեց։

Այսպես՝ ֆրանկլինն առաջին անգամ իմացավ, վոր կայծակը մի հսկայական ելեկտրական կայծ ե, իսկ վորոտը՝ այդ կայծի ուժեղ ճայթյունը (նկ. 52)։

Հետագալում գիտնականները հաստատեցին, վոր կայծակն ու վորոտը առաջանում են միաժամանակ։ Յեկ յեթե մենք կայծակն ավելի շուտ ենք տեսնում, քան թե վորոտը լսում, այդ կայծված ե նըանից, վոր լույսը մեզ ավելի արագ ե հասնում, քան ճայնը։

Գիտությունը պարզելով, թե ինչ ե կայծակը և վորոտը, մերկացրեց այն կրօնական նախապաշտառումների անմըտությունները, վոր կայն կայծակի և վորոտի մասին։

Նկ. 52. Կայծակ (Կիշերային լուսանկարից)։




Ամպրոպի ժամանակ կայծակը թռչում է կամ յերկու ամպերի միջև կամ ամպի և յերկրի միջև։ Կայծակը յերկրին խփելիս կարող է տունը հրդեհել, մարդուն սպանել։ Կայծակից պաշտպանվում են շանթարգելի միջոցով։ Շանթարգելը հնարել է ֆրանկինը։

Ֆրանկինը մի այսպիսի փորձ կատարեց։ Նա գետնի մեջ խորը տնկեց մի բարձր մետաղե ձող։ Ամպրոպի ժամանակ կայծակը խփում եր այդ ձողին և նրա միջով անցնում եր գետնի մեջ։ Այդ առաջին շանթարգելն եր։

Ֆրանկինն իր հնարած շանթարգելն առաջարկեց բարձր շենքերի պաշտպանության համար։ Յերբ սկսեցին շանթարգելը գործադրել, յերեաց, վոր հաղվադեալ և պատահում իրի, իսկ յեթե խփում ե, շանթարգելին և խփում և նրա միջով ուղղակի անցնում ե գետնի մեջ։ Ակզրում շանթարգելն սկսեցին գործադրել Ամերիկայում, իսկ հետո նաև Յեվրոպայում։ Մեր ժամանակում շանթարգելներն ավելի կատարելազործված են և ամեն տեղ գործադրվում են կայծակից պաշտպանվելու համար (նկ. 53)։

Շանթարգել յեղած դեպքում կայծակը վտանգավոր չե։ Մենք այժմ կարող ենք կայծակը դեկավակը դեկավակը և հնագանդեցնել մեզ։



Նկ. 53. Շանթարգելի գործադրումը ծինելույցից մոտ։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆԻՑԻԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Վլադիմիր իլիչ Լենինն ասում եր. «կոմունիզմը՝ այդ խորհրդային իշխանությունն եւ պլյուս ամբողջ յերկրի ելեկտրոֆիկացիան»։ Լենինի այս ցուցումն անշերդորեն կատարվում է մեր շինարարության մեջ։ Մեր յերկրը ծածկվեց ելեկտրական կայանների ցանցերով։ Նրանք աշխատում են վառելանյութով, ոգտագործվում ե նրանց մեջ նաև թափվող ջրի ուժը և նույնիսկ քամու ուժը։ Ելեկտրակայանները Ելեկտրոն կանություն են հասցնում ֆաբրիկներին և գործարաններին, կուտանսություններէն ու խորհանտեսություններին, բանվորի և գյուղացու բնակարանները։

Ելեկտրոֆիկացիայի ասպարեզում մեր լերկիրը հըսկաւական հաջողությունների յե հասել։ Մենակ Դնեպրի ելեկտրակայանն այժմ ավելի ելեկտրականությունն ե արտադրում, քան ցարական Ռուսաստանի բոլոր ելեկտրակայաններն եյին արտադրում։ Իսկ մեր բոլոր ելեկտրակայանները համարյա 18 անգամ ավելի ելեկտրականություն են արտադրում ցարական Ռուսաստանի ելեկտրակայաններից։ Ելեկտրականության արտադրությամբ ցարական Ռուսաստանը գրավում եր տասնհինգերորդ տեղը, իսկ այժմ Խորհրդային Միությունը գրավել է յերրորդ տեղն աշխարհում։

Ծաղկաբողբոջը նույնպես ծածկված է թեփուկներով։
Բողբոջի ներսում գտնվում է ծաղկի սաղմը։ Ծաղկաբող-
բոջից է զարգանում ծաղիկներով ծածկված ճյուղը։

ՏԵՐԵՎԱԳԱՍԹԱԿԱՐԸ

V. ԲՈՒՑՄԵՐԻ ԿՅԱՆՔԸ


ԽՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԲՈՒՑՄԵՐԸ ՎԱՂ ԳԱՐՈՒՆՔԻՆ

Գարունը յեկավ։ Գարնանային արևն սկսում է ավելի և ավելի տաքացնել։

Անտառում ծառերն ու թփերը դեռևս մերկ են, նը-
րանց վրա դեռևս վոչ տերեներ կան, վոչ ծաղիկներ, բայց
նըրանց բողբոջներն արդեն ուռոցում են և շուտով նըրանք
կծածկվեն կանաչ տերեններով ու ծաղիկներով։

ԲՈՂԲՈՁՆԵՐ

Կարենը թանթրվենու ճյուղը։ Նրա վրա շատ բող-
բոջներ կան (նկ. 54)։



նկ. 54. Թանթրվենու բողբոջ-
ները բացվելուց առաջ և բաց-
վելու սկզբին։

Բաց անենք տերեաբող-
բոջը։ Դրսից նա ծածկված
է կաշենման թեփուկներով։
Բողբոջի ներսում գտնվում

են ցողունի սաղմը և տերեկիները։ Տերեաբողբոջը եւ զար-
գանում կանաչ տերեններով ծածկված ճյուղը։


Հետաքրքրական է զիտել, թե ինչպես են ծառերն
ու թփերը ծածկվում տերեներով։

Սկզբում ուռչում են բողբոջները և քանի գնում ավե-
լի և ավելի մեծանում։ Թեփուկներն աստիճանաբար բաց-
վում են և վերջապես բողբոջից դուրս է դալիս կանաչ
տերեր։ Բողբոջը բացվում է։

Բացված բողբոջի մեջ յերեսում են փոքրիկ կնճոսոտ
տերեկիները։ Նրանք հետզհետե բացվում և դառնում
են այնպիսի տերեններ, ինչպիսիք մենք սովորել ենք տես-
նել մեր ծառերի և թփերի վրա։ Այսպես է կատարվում
տերեապատումը։

ԾԱՂԿԵԼԸ

Ծառերից և թփերից շատերն սկսում են ծաղկել դեռ
վաղ զարունքին։ Նկարներում ցույց է տրված մեր մի



նկ. 55. Ռւսենու ծաղիկները (առե-
չափոր և վարսանդավոր)։

56. Կաղինի ծաղիկ-
ները։

քանի ծառերի և թփերի ծաղիկները, վորոնք ծաղկում են վաղ գարունքին: Ուստանու «փշիկները», կաղինի և բարդու «կատվիկները»: (Նկ. 55, 56, 57):


Այդ բույսերն սկսում են ծաղկել տերեների բացվելուց դեռ շատ վաղ:

ԱՌԱՋԻՆ ԳԱՐՆԱՆՅԻՆ ԾԱՐԴԻԿՆԵՐԸ

Վաղ գարունքին են ծաղկում նաև մի քանի խոտաբույսեր: Վորոնք են գարնան այդ անդրանիկները:

Վաղ գարունքին կավահողերում, համարյա ամեն տեղ, կարելի յե հանդիպել մի բույսի, վոր կոչվում ե


Նկ. 57. Բարդուծաղիկները:
Խոնկորիկ (Նկ. 58, 59): Խոճկորիկը ծաղկում ե դեռևս տերեների յերեվալուց առաջ:



Նկ. 58. Խոճկորիկը վաղ գարունքին:

Նրա ծաղիկները դեղին են, մի վորք նման են մեզ ծանոթ խատուտիկի ծաղիկներին: Խոճկորիկի տերեներն ավելի ուշ են յերեան գալիս: Նրանք հետաքրքրական են նրանով, վոր տերեների վերին մակերեսը կանաչ ու հարթ է, իսկ ստորինը ծածկված է կարծես թե սպիտակ թաղիքով: Յեթե խոճկորիկի տերևն ձուեցնես թշիգ, նրա ստորին յերևը թվում ե տաք, իսկ վերեինը՝ սառը: Այդ պատճառով այդ բուսն անվանում են նաև մայր ու խորթ մայր:

Խոճկորիկի հաստ և ճյուղավոր կոճղարմատը գտնվում է հողի տակ, վորի մեջ դեռ անցյալ տարիվանից սննդանութերի պաշար կա կուտակված:



Նկ. 59. Խոճկորիկն ամառը:

Վաղ գարունքին ծաղկող ուրիշ բույսերի ստորերկօրոյա նասերում ել սննդանութերի պաշար կա կուտակված, փնջիկինը՝ պալարի մեջ, իսկ սազասխինը՝ սպիսուկի մեջ:

Սննդանութերի պաշարը բույսին անհրաժեշտ է վաղ գարունքին զարգանալու համար:

Վաղ գարնանալին ծաղիկները շատ շուտով թափվում են, այդ պատճառով պետք է ժամանակին նրանց տեսնել: Ամառն արդեն նըանց չենք կարող տեսնել:

ԻՆՉՊԵՍ Ե ԲՈՒՑՅԸ ԶԱՐԴԱՆՈՒՄ ՍԵՐՄԻՑ:

Գարունքին մեր Միության անսահման դաշտերում ցանք ե կատարվում: Գյուղատնտեսական կարևորագույն

կամպանիան եւ այդ: Յանած սերմերից զարգանում են բուլսեր, վորոնք մեզ առատ բերք են տալիս:

Յերբ սերմն ընկնում եւ փխրուն և խոնավ հողի մեջ, վորտեղ նաև բավականաշափ տաք ե, նա ծծում եւ ջուրը ուռչում եւ ծլում:

Բուլսը զարգանում եւ սաղմից, վորը լուրտքանչյուր սերմի մեջ կաւ Ալտպես, որինակ, լեթե վերցնենք ջրի մեջ թրջած վորոնի կամ սխեռի սերմը, նրա մաշկը հանենք




Նկ. 60. Տարեկանի սերմի ծլումը:

և հետո սերմի յերկու կեսերն իրարից բաժանենք, նրանց միջև կտեսնենք բողբոջիկ և արմատիկ: Արմատիկը և բողբոջիկը բլթակներով միասին բուլսի սաղմն են կազմում: Սաղմը սրնայի նկատվում ենաև տարեկանի սերմի մեջ: Սաղմը սրնայի նյութերով, վորոնք գտնվում են սերմի մեջ վում եւ ան նյութերով, վորոնք գտնվում են սերմի մեջ և նրանցից աստիճանաբար զարգանում եւ բուլսը:

Փորձ Վորպեսպի ղիտենք թե ինչպես եւ սերմը ծլում ե ինչպես այդ սերմից մատղաշ բույսն ե զարգանում, մի այսպիսի փորձ կատարենք: Վերցնենք ապակե յերկու բաժակ: Յուրաքանչյուր բաժակի բերանը թանդիֆի կամ մի սուրիշ նոր գործվածքի կտորը քաշենք: Թանդիֆը կամ կտորիշ մի փոքր սեղմենք ղեպի բաժակի ներսը: Յերկու բաժակն ել ջրով լցնենք այնքան, վոր թանդիֆը կամ կտորը թրջվեն: Բաժակներից մեկի թանդիֆի վրա գնենք սխեռի սերմեր, իսկ մյուսի վրա՝ տարեկանի կամ ցորենի սերմեր: Ժամանակ առ ժամանակ բաժակի մեջ ջուր ավելացնենք: Դիտենք, թե ինչպես են սերմերը ծլում և ինչպես այդ սերմից մատադ բույսն ե զարգանում (Նկ. 60):

ԲՈՒՑՍԵՐԻ ԱՐՄԱՏԻ

Յերբ սերմը ծլում ե, նրա սաղմը սկսում է սնվել այն սննդանյութերով, վորոնք գտնվում են սերմի մեջ: Բայց ահա հողում ցանած սերմերը ծլեցին: Այդ սերմերից զարգացն մատադ բույսեր: Նրանց արմատները խորացան փխրուն հողի մեջ: Հողը ծածկվեց զըմբուխտի կանաչ ծիւլերով: Այժմ ի՞նչ մատադ եւ հողի մեջ: Արմատիկի սերմի արմատիկը լերով:



Նկ. 61. Արմատակի սերմի արմատիկը լերով: Այժմ ի՞նչ մատադ եւ հողի մեջ: Վում մատադ բույսը:


Բուլսը հողից վերցնում ե ջուր և սննդաբար աղեր: Նա ջուրն ու աղերը վերցնում ե իր արմատներով: Տեսնենք՝ ինչպիսի արմատներ են ունենում տարբեր բույսերը:

62-րդ նկարում ցույց ե տրված զանազան մշակովի բույսերի արմատներ: Ի՞նչպիսի մեծ արմատներ են: Ի՞նչ-

պես նրանք տարածվում են լայնությամբ և խորությամբ:
ի՞նչպես թափանցում են նրանք հողի մեջ:

Արևածաղիկն ունի գլխավոր արմատ, վոր ճյուղավոր-
վում ե: Այդպիսի արմատը կոչվում է գլխավոր արմատ:

Ճակնդեղը նույնպես գլխավոր արմատ ունի, վորը
նույնպես ճյուղավորվում ե: Բայց նրա արմատը հյութալի
և հաստ ե: Նրա մեջ սննդանյութեր են կուտակված: Ճա-
կնդեղի արմատը ծառառում ե վորպես շտեմարան: Շաղ-
գամի արմատն ել նույն նշանակությունն ունի, թեակատ
առ ձեռվ տարբերվում ե:



Ակ. 62. Արևածաղիկ, ճակնդեղի և տարեկանի արմատները:

Տարեկանի արմատներն անսպես չեն, ինչպես արևա-
ծաղիկի և ճակնդեղի արմատները: Տարեկանը գլխավոր ար-
մատ չունի: Նրա արմատները տարածվում են վնշանման:

Այդպիսի արմատները կոչվում են փեղարմաներ:

Յեթե շատ ուշադրությամբ դիտենք բույսերի արմատ-
ները, մենք այսակա կզանենք մանրագույն արմատամա-
զիկներ (ակ. 63): Արմատամազիկներով բույսը հողից ծծում
ե ջուր և նրա մեջ լուծված սննդարար աղեր:

Յեթե արմատամազիկները պոկենք, բույսը կչորանա-
Առա թե ինչու բույսերը տեղափոխելիս, որինակ՝ ջերմոց-
ներում և բանջարանոցներում, պետք է հետևել, վոր արմա-
տամազիկները չփառագեն:


Բույսերը բազմաթիվ արմատ-
ներ ունեն: Առավել ևս շատ ար-
մատային մազիկներ կան արմատ-
ների վրա: Այդ արմատամազիկ-
ների շնորհիվ բույսը հողից ծծում
ե ջուր և նրա մեջ լուծված սնն-
դարար աղերը:

Բայց վորովհետև հողի մեջ այդ
սննդարար աղերը քիչ են, անհրա-
ժեշտ ե հողը պարարտացնել և նրա
մեջ սննդարար աղեր ավելացնել:

Հողի կանոնավոր մշակումով
և պարարտացումով մենք կրաք-
ացնեք մեր դաշտերի բերքը:

ԲՈՒՑԱԵՐԻ ԿԱՆԱԶ ՏԵՐԵՎՆԵՐԸ

Ո՞վ չի հիացել կանաչին տվող
արտերով, կանաչ ծաղկած մարգա-
գեալիններով, անտառի խշխացող
կանաչ տերեններով: Բայց արդիոք
բոլորը գիտեն, թե ինչու տերենները
կանաչ են:



Ակ. 63. Մանաների ար-
մատների արմատամա-
զիկները:


Փորձ. Վերցնենք յերկու կամի ծաղկաման կամ յերկու թիթեղյա բանկա և հող լցնենք: Հողը ջրենք և նրա մեջ ցանենք վորեե բույսի սերմեր, որինակ՝ սխեռի կամ վարսակի սերմեր: Մի ծաղկամանը դնենք դուրս, արեի լույսի տակ, իսկ մուսը՝ մթության մեջ, վորտեղ արեի ճառագալթները չեն թափանցում:

Մի քանի որից հետո մենք կանոնինք, վոր յերկու ծաղկամանի սերմերն ել ծլեցին և նրանցից աճեցին մատադ բուկսեր: Բայց ի՞նչ տարբերություն կա նըրանց մեջ (նկ. 64):

Լույսի մեջ բուսած բույսերը նորմալ են, կանաչ: Իսկ մթության մեջ բուսած բույսերը յերկարացած են, և գունատգելին: Նրանց մեջ կանաչ գույն չկա: Ուրեմն բույսերը միայն լույսի տակ են կանաչում: Իսկ բույսերը կանաչում են այն պատճառով, վոր լուսավոր տեղում նրանց մեջ առաջանում ե մի կանաչ ներկող նլութ: Ահա թե ինչո՞ւ յեն բույսերի տերեները կանաչ

Նկ. 64. Մթության մեջ բուսած բույսը (ձախ կողմը) և լույսի մեջ բուսածը (աջ կողմը):

կանաչ բույսերն արեի զավակներն են: Նրանք առանց արեի չեն կարող ապրել: Այդ բանն ամեն հողագործ գիտե և նա կանաչ բույսերը չի բուսցնի մի այնպիսի տեղ:



վորտեղ արեի ճառագալթը չի թափանցում: Այնտեղից գույնութեան առաջանակ: Բոլորն ել գիտեն, վոր առանց արեի բերք չես ստանա: Բոլորն ել գիտեն, վոր առանց արեի բերք և նրա մեջ ցանենք բույսերն ապրել չեն կարող: Բայց թե ինչույսի՝ կանաչ բույսերն ապրել չեն կարող: Համար լույսն անհրաժեշտ է, հաճախ չնու կանաչ բույսերի համար լույսն անհրաժեշտ չեն իմանում:

Հարյուր տարի առաջ առաջին անգամ հայտնի դարձավ, վոր բույսերը սնվում են վոչ միայն հողից այլ և ողից: Պարզվեց, վոր կանաչ բույսերը սնվում են ողից ածխաթթու գազով և զրանով սնվում են միայն լույսի տակ:

Զուրը և նրա մեջ լուծված սննդարար աղերը բույսը վերցնում ե հողից իր արմատներով: Իսկ ածխաթթու գազը բույսը վերցնում է ողից տերեներով: Ածխաթթու գազի բույսը վերցնում է միայն կանաչ տերեների և ջրի մեջ գտնված նյութերից բույսերի կանաչ տերեների մեջ, լույսի տակ առաջանում ե մի սննդարար նյութ — պալա: Ահա, թե ինչո՞ւ կանաչ բույսերի համար լույսն անհրաժեշտ է:

ԻՆՉՊԻՄԻ ՑՈՂՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ԶԱՆՍՁԱՆ ԲՈՒՅՍԵՐԸ

Բնության մեջ բուսած բույսը բույսերը կարելի են բաժանել յերեք մեծ խմբերի՝ խոտաբօյսեր, թփեր յել ծառեր:

Խոտաբօյսերը կամ ուղղակի խոտերը աչքի յեն ընկնում նրանով, վոր նրանք բույրը փափուկ խոտային ցողուն ունեն: Իսկ թփերն ու ծառերը փայտային պինդ ցողուն ունեն:

Իսկ ծառերն ու թփերն ինչո՞ւ են տարբերվում իրարից: Յեթե դուք դիտեք մի վորեւ ծառ, որինակ՝ լորենին և կեչին, դուք կտեսնեք, վոր նրանք ունեն մի գլխավոր ցողուն — բուն, վոր ճյուղավորվում ե: Իսկ թփերը, որինակ՝ ցարդենին և կաղինը, այդպիսի բուն չունեն, նրանց ցողուններն արմատից ակալում են փոնջ կազմելով: Ահա ցողունների այդ կազմությունով են ծառերն ու թփերն իրարից տարբերվում:

ԶՐԻ ԳՈԼՈՐԾԵԱՑՈՒՄԸ ԲՈՒՅՈՒԹԻ ԿՈՂՄԻՑ

Բույսերի մեծ մասն ուղիղ կանգնած ցողուն ունեն: Բայց մի քանի բույսեր ել փաթաթվող և գետնի վրա փռվող ցողուններ ունեն: Որինակ՝ լրին և զայլուկը փաթաթվող ցողուն ունեն: Նրանց ցողունը յերկար և թուլ է: Այդպիսի ցողունը փաթաթվում է վորեկ ամուր հենարանի շուրջը և տերեններն ուղղում ե զետի լույսը: Գետնին փռվող ցողուն ունի, որինակը վարունգը: Նրա ցողունը նույնպես յերկար և թուլ է, բայց նա փռվում է զետնի վրա:

Գլուղատնառնեռթյան մեջ փռվող ցողուններ ունեցող բույսերի, որինակ՝ լրու, մարգերում փատե նեցուկներ են անկում: Փովող ցողուններ ունեցող բույսերը, որինակ՝ վարունգը, մեկը մուսսից ավելի հեռու յեն ցանում, վորպեսպի նրանց ցողունները կարողանան գետնի վրա փռվել:

Ցողունների վրա տերեններ կամ, վորոնք ուղղվում են լույսի կողմը: Բայց ցողուններն ուրիշ նշանակություն ել ունեն բույսի համար: Այդ նշանակությունը հասկանալու համար մի այսպիսի փորձ կատարենք:

Փորձ Շշի կամ բաժակի մեջ մի քիչ ջրախառն կարմիր թանաք լցնենք և նրա մեջ տերեններով ծածկված մի ճյուղ դնենք:

Հետեյալ որը ճյուղը թանաքի միջից հանենք և կտրատենք թե լայնությամբ և թե յերկարությամբ: Կտեսնենք, թե ինչպես ե ցողունը կարմիր թանաքով ներկվել: Կարմը բել են նաև տերենի յերակները:

Այդ փորձը ցույց ե տալիս, վոր արմատից ցողունի միջով զետի տերեններն են բարձրանում ջուրը և նրա մեջ լուծված սննդարար աղերը, վորոնք բույսը ծծում հողից իր արմատների միջոցով:

Հողից ծծված աղերը մնում են բույսի մեջ: Յերբ բույսն այրում ենք, մենք այդ աղերը հալտարերում ենք՝ ստացված մոխիրը հենց հանքային աղերն են: Իսկ ջուրը, վոր բույսը ծծում է հողից, ամբողջովին նրա մեջ չի մնում: Տերեններով մեծ քանակությամբ ջուր և գոլորշիանում: Տերեններով մեծ քանակությամբ ջուր և գոլորշիանում: Ջրի գոլորշիացումը բույսի կողմից՝ կարելի յե տեսնել հետեյալ փորձով:

Փորձ. Տերեններով ծածկված բույսի մի փոքր ճյուղը դնենք ջրով լիքը փորձանոթի: Ջրի լերեսը մի շերտ լուրջնենք, մակերեսը ջրի մակերեսից գոլուշիացում դով ծածկենք, վորպեսպի ջրի մակերեսը վորձանոթի մեջ նշենք: Մեկշկատարվի: Ջրի մակերեսը վորձանոթի մեջ նշենք: Պատճառն այն է, վոր բույսը ցածրացել վորձանոթի մեջ: Պատճառն այն է, վոր բույսը ծծում է ջուրը և գոլորշիացնում է իր տերենների միջոցով:

Բույսերը մեծ քանակությամբ լուր են գոլորշիացնում: Մշակովի բույսերի հետ միասին մոլախոտերն ել են ջուր պատճենավոր հողը չորացնում են: Այդ պատճենավոր լերաշտի դեմ պայքարելիս մեծ նշանակություն ունի մոլախոտերի դեմ պայքարելը:

ԾԱՂԻԿՆԵՐԻ, ՄԻԶԱՏՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՄՈՒ
ՄԱՍԻՆ


ԾԱՂԻԿՆԵՐԻ ԲԱԼԵՆԻՆԵՐԻ ԱՅԳՈՒՄ

Բալենին ծաղկում ե գարնանը: Բալենու ճյուղերի վրա բաղժաթիվ սպիտակ ծաղկիներ կան: Նրանք մեր այդ վրա բաղժաթիվ սպիտակ ծաղկիներն են: Նրանց վրա ծաղկից ծաղկի թոշելով բզզում են մեղուները:

Պոկենք բալի ծաղկիլը և զննենք, թե ինչպես ե նա կաղմված (նկ. 65):

Ամենից առաջ մեր ուշադրությունը գրավում են ծաղկի սպիտակ թերթիկները: Թերթիկները հինգ հատ են և կազմում են պատկը:

Դիտենք ծաղկի ներսը։ Մենք այնտեղ կտեսնենք
բազմաթիվ առեցներ։ Յուրաքանչյուր առեջ կազմված ե
առեջաթելից և նրա ծալքի գեղին փոշանոթից։ Այդ փոշա-
նոթի մեջ հասունանում են մանրիկ փոշիները։ Յերբ փոշին
հասունանում ե, փոշանոթը պատռվում ե, և փոշին նրա
միջից դուրս և թափվում։ Ծաղկի մեջտեղում յերեխում ե
վարսանդը։ Բալի ծաղկի մեջ մի վարսանդ կա։ Վարսանդի



Նկ: 65. Բալի ծաղկի կտրվածքը (մեջացրած):

Ներքեի ժառը լայնացած է: Այդ նրա սերմարանն է: Սերմա-
րանից վերև պալիս և տնակը, իսկ նրա ծայրին՝ սպիթ:

Յեթև մենք ծաղիկը դիտենք ներքեմի կողմից, մենք
այստեղ կտեսնենք փոքրիկ կանաչ տերեկիկներ։ Նրանք
բաժակատերենվիկներն են։ Բաժակատերեկիկները հինգ հատ
են։ Նրանք կազմում են բաժակ, վորը դրսից պաշտպան-
նում է ծաղիկը։

Մենք այժմ իմացանք, թե ինչուս և կազմված բարի
ծաղիկը Բայց մեղսներն ինչ են անում այդ ծաղիկների

վրա: Խոչնւ այդշափ զատ են թռչում նըմանք բալի պար-
տեցում:

Բալի սպիտակ ծաղիկները նրանով են գրավում ուս-
դուներին, վոր այդ ծաղիկների մեջ կա մի քաղցր հյութ՝
Ահա այդ քաղցր հյութի պատճառով ե, վոր մեղոնները թւ-
շում են գեղի ծաղիկները:

Բայց մեղուների այցելությունը ժաղվաստիք բայց կամար ել ոգտավետ եւ Յերբ մեղուն թռչում ե ծաղկի վրա՝ քաղցր հյութ գերցնելու, սրա թափամազ մտ մնի վրա փոշանոթից թափափող փոշին և նստում։ Իսկ յերբ ուեւ դուն տեղափոխում ե և մեկ ուրիշ ծաղկի վրա նստում, այն ժամանակ իր հետ տարած փոշին կպչում ե այդ ծաղկի վարսանդի սպոռ վրա։ Այսպես ուրեմն մեղուները մեկ ծաղկից մուսը փոշի յեն տեղափոխում։ Ուրեմն բալի՛ ծաղիկների փուռում ե կատարվում մեղուների միջոցով։ Միայն ծաղկի փոշումը ից հետո նրա սերմարանը սկսում ե զարդանալ և գառնում ե մեզ ամենքիս լավ ծանոթ բալի՛ պտուղը, վորը հասունանում ե ամառվա կիսին։

ԾԱԼԿԱԾ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՐ


Տարեկանը ծաղկում և ամառ՝ Տարեկանի ծաղկելը
պատկանի (նկ. 66): Նա կազմված է կանաչավուն թե-
փուկ կամ սպիտակ գույնով և մի վարսանդից՝ իր յերկու
փետրածերից, յերեք առեջոց և մի վարսանդից՝

Ծաղկած տարեկանի արտօնմ չենք տասը օհութ ծաղիկ թռչող մեղուներ: Աւեմ ինչպիս և տարեկանի փառին ծառին ծաղիկ տեղափոխվում:

Ամառը գնացեք դաշտը, վորտեղ տարեկաս և օպեր
կեր: Դաշտի վրա դուք կնկատեք գեղին փոշու ամպ: Տարեկա-
նի փոշին ե այդ: Քամին փշում և պատոված փոշանոթների
փոշին աեղափոխում ե ծաղկից ծաղիկ: Տարեկանը, ինչպես

նաև բազմաթիվ բու սեր, վորոնք պսակ չունեն, վոշոտվում
են բամու միջոցով:

Միայն վոշանոթից հետո տարսկասի սերմարանները
զարգանալով դառնում են հատիկներ,
վորոնց բերքը հավաքում են ամառվա
կիսին:



Նկ. 66. Տարեկանի
ծաղիկը
(մեծացրած)

Արիշ բույսեր, ինչպիս, որինակը
ճակնդեղը, բողկը, գազար, իրենց զար-
գացումը մի սերմից մինչև նոր սերմը
անց են կացնում յերկու տարում: Առա-
ջին տարին նրանք առաջացնում են
հաստ արմատ, կարճ ցողուն և նը-
րանից տարածվող տերեներ: Միայն հե-
տեւյալ տարին են նրանք ծաղկում և

պտուղ ու սերմ տալիս: Բոլոր այսպիսի բույսերը կոչվում
են յերկամյա բույսեր:

Վերջապես, կան բույսեր, ինչպիս որինակ, ինձորենին,
տանձենին, վորոնք սկսում են ծաղկել միայն իրենց կյանքի
5-6-րդ տարում: Իսկ յերեմն ել ավելի ուշ՝ Դրանից հետո
ծաղկում և բերք են տալիս ամեն տարի, իրենց բազմաւ-

յա կյանքի բնթացքում: Այդպիսի բույսերը կոչվում են
բազմաւյա.

Մեր սշակովի բույսերի, որինակ՝ ցորենաւրի մեջ վա-
զուց են տարերում աշնանացան և զարնանացան և եսակ-
ները: Գարնանացանը գարնանն են ցանում, վորը նույն ա-
մառվա մեջ հասկակալում ե, ծաղկում և բերք տալիս:
Աշնանացանը սովորաբար աշնանն են ցանում: Բայց աշնա-
նա միայն թփավորվում է: Միայն ձյունի տակ հաջող
կերպով ձեռելուց հետո հետեյալ ամսոր, այս ցորենը հաս-
կակալում ե, ծաղկում և պտուղ բերում: Յեվ յեթե աշնա-
կակալում ե, ծաղկում և բարենը ցանում ենք զարնանը, նա նույնպիս
նային ցորենը ցանում ենք զարնանը, նա նույնպիս
հասկակալում, ծաղկում և բերք ե տալիս միայն հետեյալ
տարում:

Բայց կարելի յե զեկավարել բույսի զարգացումը՝
Այսպես, յեթե աշնանացան ցորենը թեթև կերպով աճեց-
նենք, ապա 40 որ պահենք ցուրտ պայմաններում ($2-3^{\circ}$ ջե-
նենք), այն ժամանակ զարնանը ցանած սերմերից
մությամբ), այն ժամանակ զարնանը ցանած սերմերից
պարզանում են բույսեր, վորոնք նույն ամսոն ել հասու-
զարգանում են: Բույսերի զարգացումը զեկավարելու առ յե-
նանում են: Բույսերի զարգացումը զեկավարելու առ յե-

Այսուհետև հնարագոր և դարձել զարնանացան ցորենն
ել յարովիզացիալի ինթարկել: Նրա սերմերը թեթև կերպով
ծեցնում են, ապա 25-50 որ պահում են ցուրտ տեղում
(մոտ 10°): Յարովիզացիալի յենթարկված սերմերից ստոց-
վում են այսպիսի բույսեր, վորոնք մի քանի որ ավելի
շուտ են հասունանում ե, վոր ամենակարեվորն ե, ավելի
բերք են տալիս: Միության մեջ զարնանացին ցորենն
ների յարովիզացիան միջին հաշվով մեկ հեկտարից համար-
ների յարովիզացիան միջին հաշվով մեկ հեկտարից համար-

ապա կը սրելի յե հաշվել, թե ինչքան լրացուցիչ բերք կը ստանա գրանից մեր քերկի ըլլ:

Յարովիզացիան խորհրդային գիտության և գյուղատնտեսական ոլրակարիկայի խոշորագույն նվաճումներից մեկն է։ Նա հնարավորություն ե տալիս մեզ բուժի զարգացումը դեկավարել մեք տնտեսական նպատակներին համապատասխանելու:

VI. ԱՐԱՐԱԿԱՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Առըսպեսզի մեր սոցիալիստական հասարակության համար առողջ և կոթոքած աշխատավորներ լինենք, անհրաժեշտ են խմանալ, թե ինչպես մանուկ հասակից մեր առողջությունը պահպանենք և ինչպես կանոնավոր աշխատենք:

Ա.ՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՀԱՆԳԻՍԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Յանուարի կասարանը կեղաստ և փոշոտ, ողի մեջ ել շատ
փոշէ ին լինում:

ՄԵՆՔ ՉԱՅՈՒՄ ԵՆՔ այդ ողով և ողի հետ մրաս
չում ենք փոշին, փոշին մտնում ե մեր թոքերը:
Փառքից մետ մասրեներ (միկրոբներ) կան

Փոշու մեջ միշտ սասրբառ-է գոյն
 Նրանք շատ մանր և հասարակ աչքով
 անտեսանելի կենդանի եյակներ են:
 Փոշու ողի մեջ նրանց քանակը շատ
 շատ է: Յերբ մենք փոշու ող ենք շնչում,
 մանրեները մտնում են մեր թոքերը:
 Այդ մանրեների մեջ կան այնպիսիները,
 վորոնք հիվանդություն են առաջաց-
 նում քոյերի պալարախ կամ ինչպես
 սովորաբար ասում են՝ թոքախտ: Պա-
 լարախտից շատ մարդիկ են մերնում:
 Վորպեսզի փոշու ող շնչենք, պետք
 ե դասարանը անպատճառ ոպափոխենք



Նկ. 67. Սեղանի
տառջ կանոնավոր
հաստելու ձևը:

Գասարանի ողանցքը հաճախ պետք է բաց անել, իսկ յեթե լեզանակը թույլ եւ տալիս, այն ժամանակ պետք է բաց անել նաև դատուհանը: Բաց ողանցքով կամ պատուհանով գույ և կդնա վոշտ և փչացած ողը և ներս կմտնի մաքուր և թարմ ողը:

Աշխատանքի ժամանակ դասարանում պետք է կանոնավոր նախագծը նստիլ:

Աշակերտներից շատերը նստարանի վրա կամ գրասեղանի առջև անկանոն են նստում: Նստում են մեջքները ծռած և կուցած: Յեթե նրանք մշտական այդպես նստեն, այս ժամանակ նրանց մեջքը կծովի, և ալզ ծովածությունը կարող է մնալ ամբողջ կյանքում: Պետք ե սովորել ուղիղ նստեր, չկուշանալ և չծռվել (նկ. 67):

Աշակերտներից վոմանք կարդալու կամ գրելու ժամանակ շատ ցած են թեքում զրբի կամ տետրակի վրա։ Յեվյեթեալպես շաբունակին մշտական, նրանց տեսողությունը կփչանա։ Նրանք կարճատես կդառնան և հեռուն վատ կը տեսնեն։

Այն գիրքը, վոր դուք կարգում եք, կամ այն տես-
րակը, վորի վրա զբում եք, պետք ե ձեր աչքերից վորոշ
հեռավորութիւն վրա գտնվեն: 68-րդ նկարում ցույց ե
տրված թե ինչպես կարելի յե այդ հեռավորութիւնը վո-
րոշել:

Աշխատելիս պետք ենստել այնպես, վոր լույսն ուղղակի աչքի մեջ չընկնի և լավ լուսավորված լինի այն գիրքը, որ դուք կարդում եք, կամ այն տեսրակը, վորի վրա զբում եք: Յեթե ուժեղ լույսն ընկնում է ուղղակի աչքի մեջ, նրանից աչքը փշանում է: Յեթե լույսը յետեսումն ե, այն ժամանակ ձեր գլխի ստվերը կընկնի գրքի կամ տեսրակի վրա: Իսկ յեթե լույսը դանվում է աջ կողմում, այն ժամանակ գրելիս ձեր ձեռքի ստվերը կընկնի տեսրակի

վրա : Ամենից լավն ան ե, վոր աշխատելիս նստե՞ք անպես,
վոր լույսը գտնվի ձախ կողմում :
Գետք ե վոչ միայն կանոնավոր
աշխատել իմանաբ այլ և կանոնա-
վոր հանգստանալ : Դասարանում
յերկար նստելու դեպքում սգտա-
կար ե ֆիզկուլտ բռպի անցկացներ
այսինքն, պատւհանները բաց ա-
րած մի քանի ֆիզիկուկան վար-
ժություններ կատարել : Այդ բա-
նը մարդուն թարմացնուի և աշ-
խուժացնում ե :

Դաստիքներին պետք է հան- Նկ. 68. Ինչպես վորոշէ գըստանալ Դաստիքների ամե- գրքից մինչև աշքը կա- նալավ հանդիսալ թարմ սղում նոնավոր հառավորու- թյունը:

Տան աշխատանիցն ու հանգիսը

Տանն ել անհրաժեշտ ե մաքըութիւնն և կարգ ու կանոն։ Պետք ե մշտապես հետևել, զոր տանն ել փոշի և կեղա չվիճի, զոր ամեն տեղ մաքուը լինի։ Պետք ե սենյակն ողափոխել, մանավանդ առավոտան քնից հետո և լերե- լողափոխել, մանավանդ առավանդ։ Պետք ե տանեցիներին բացատրել կուան քնելուց առաջ։ Պետք ե տանեցիներին բացատրել լեթե նրանք չգիտեն, թե ինչու անհրաժեշտ ե սենյակն ողափոխել։

կավ չե, իերբ տան մեջ իլուրը, զիրսուրը
ները ցրիվ տված են: Պետք է տանը աշխատանքի ան-
կյուն սարքել, գորտեղ լինեն ձեր բոլոր դասապիտուրները
և գորտեղ կարողանաք ձեղ տված դասերը պատրաստել:



Տանը վոչ միայն պետք եւ դասերը պատրաստել եր ուժի համապատասխան տնային աշխատանքներ կատարել այլ և անպատճառ պետք եւ հանգստանալ: Ամենաշավ հանդիսացը թարմ ողում զբոնեն ու խաղան եւ իսկ ձմեռը, բացի դրանից, սպորտով պարապել՝ սառցասար, սահնակ, չմուշկներ, դահուկներ:

Ամեն որ մի-իրկու ժամ ցերեկվա թարմ ողում լինել: Վորպեսպի չմրսեք, հարկավոր չե փաթաթվել, այլ հարկավոր ե աստիճանաբար և զգուշությամբ մարմինն ամրապլնդել: Յերեկոյան պետք ե ժամանակին պառկել քնելու: Զերեկոյան պետք ե ժամանակին պառկել քնելու: Զեր հասակի յերեխաները պետք ե որական քնեն 10 ժամից վոչ պակաս:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՀԱՆԳԻՍՏԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Առաջ, յերբ ֆաբրիկներն ու գործարանները պատկանում եյին կապիտալիստաներին, բանվորներն որական աշխատում ելին 10 ժամ և նույնիսկ ավելի: Կապիտալիստները շահագործում ելին բանվորներին: Նրանք աշխատում եյին միայն բանվորներից ավելի շատ շահ ստանալ: Բանվորների աշխատանքի պաշտանության մասին նրանք չելին հոգում:

Հենց վոր ֆաբրիկներն ու գործարաններն անցան խորհրդակին պետության ձեռքը, խորհրդակին իշխանությունը հաստատեց ուժժամյա բանվորական որ: Այժմ մեր ֆաբրիկներում և գործարաններում մտցված ե լոթժամյա բանվորական որ, իսկ վնասակար արտադրություներում՝ նույնիսկ վեցժամյա բանվորական որ: Մեր ֆաբրիկներում և գործարաններում հոգում են բանվորական աշխատանքի պահպանության մասին:

Ամենից առաջ հոգում են, վոր մաքուր լինի ։ Մանավանդ պալքարում են փոշու գեմ: Բազմաթիվ

ֆաբրիկներում, ինչպես որինակ տեքստիլ ֆաբրիկներում, լինում ե հատուկ արտադրական փոքի: Նա առաջնում է աշխատանքի ժամօնակ: Այդ պատճառով մեքեղանում ե պազզահների մոտ, կորտեղ ալդ փոշին և նաների և դադայահների մոտ, կորտեղ ալդ փոշին և առաջանում, սարքում են փուեծծիչներ, վորպեսպի փուաջանում, սարքում են փուեծծիչներ, վորպեսպի փուաջնին չենկնի ողի մեջ և այնտեղից ել մարդու թոքերի մեջ: Ենունի չմը մեջ և այնտեղից ել մարդու թոքերի մեջ:

Ողը թարժացնելու և մաքրելու համար սարքում են ոդակորպիչներ: Դնում են անպիսի խողովակներ, վորոնց միջով փոխիչներ: Դնում են անպիսի խողովակներ, վորոնց միջով փոշածած և փոշու ողը դուրս գնա, իսկ մասուր և փոշածած կամ կամ կանգակապատում են, վորպեսպի բանվորները պատահմամբ չվնասվեն:

Ֆաբրիկներում և գործարաններում հետեւում են նաև գաղզակավոր տեղերը տուփի մեջ են առնելու կամ գաղզակապատում են, վորպեսպի բանվորները պատահմամբ չվնասվեն:


Ֆաբրիկներում և գործարաններում հետեւում են նաև վոր լուսավորությունը կանոնավոր լինի: Լույսը չպատքե ուղղակի բանվորի աչքի մեջ ընկնի, բայց աշխատանքի ուղղակի բանվորի աչքի մեջ ընկնի: Ալպիսով պահանջում ե բանվորների տեսողությունը:

Ֆաբրիկներում և գործարաններում աշխատանքի ժամանակ հանգստի համար ընդմիջումներ են առնում: Մի մեծ նաև հանգստի համար ընդմիջումներ են առնում: Մի մեծ նաև կամ ֆաբրիկի ճաշարանից ճաշ են ստանում: Ճաշարանի կամ ֆաբրիկի ճաշարանից ճաշ են ստանում: Բանվորների հասարակական սնունդը մեզ մոտ տարեցարի պահելի լավանում ե:

Յուրաքանչյուր ֆաբրիկի և յուրաքանչյուր գործարանին կից կա բժեկական կայան, վորտեղ բանվորներին բժշկական ողնություն և ցույց տրվում:

ՄԱՆՐԵՆՔՔ ՎԱՐԱԿԻՉ ՀԻԳ ԱՆԴՐՈԹՅՈՒՆՆԵՐ
Ա.Ա.ԶՈՑՆՈՂ, ԵՆ

Յերկար ժամանակ մարդիկ չգիտեին, թէ վարակիչ
հիվանդությունները ինչից են լինում: Առաջ վարակիչ
հիվանդությունները շատ սարածված եյին: Միլիոնավոր
մարդիկ եյին մեռնում համաճարակների՝ ծաղկի, խոյերայի
և ժանտախտի ժամանակ: Ամայանում եյին քաղաքներ և
գյուղեր: Իսկ այժմ մեզ մոտ ծաղկի, խոյերայի ժանտախտի
դեպքերը շատ հազվագյուտ են: Մենք այժմ գիտենք, թէ
վարակիչ հիվանդություններն ինչից են առաջանում և
ինչպես պետք է պարագել նրանց
դեմ:




Նկ. 69. Վոլոտվայնատիֆի
մանրեները մանբադիտա-
կի տակ (լսիստ
սեծացըքած):

Մանրեների մասին միայն այն ժամանակ իմացան, յերբ հնարգեց մանրադիտակը (նկ. 71): Այդ մի զործիք ե, վորով կարելի յե ամենափոքր առարկաները դիմեր: Նա շատ ուժեղ՝ մինչև 1000 հնույնիսկ ավելի անդամ մեծաց- նում է:

Մանրեները շատ կան փողոս ողի մեջ, կեզտոս ծրում
և առհասարակ կեղտի մեջ։ Մանրեներն ը կնելով մարդու
մարմինի մեջ, հիվանդություններ են առաջացնում։ Այսպիս,
որինակ, Տիֆի մասին առաջացնում ե տիֆ հիվանդու-

թյունը, պալարախսի մանրեն առաջացնում է պայտախտ
հիվանդությունը:

Հիվանդաբեր մանրեները սեր անտեսանիլ սահման
թշնամիներն են, վորոնց գեմ անհրաժեշտ և պայքարին,
վորպեսզի պաշտպանվենք վարակիչ հիվանդություններից:



Նկ. 70. Խոլերայի
մանընեները մանրա-
զիտակիտ տակ (խիստ
ժեծացրած):

մեծ վտանգ եւ նրա մեջ պալարախտի միլիոնավոր ուժ
ըեներ կան: Փոշու հետ նրանք բարձրանում են ողի մեջ
և նրա հետ միասին մասսում են մեր թոքերւ: Հաճախ այս-
պես վարակվում են պալարախտով:

Սկզբում մարդն իրեն հիվանդ չի դդում, բայց հետո սկսում է հյուծվել: Յեվ յեթե այդ հիվանդությունը չըուժն, մարդը կմեռնի:

Այդ պատճառով պալարախտից պաշտպանվելու համար պետք է հետևել մաքրությանը, հետևել, վոր հատակին չթքեն, սենյակի ողջ հաճախ թարմացնել, թարմ ողջում և արեի տակ շատ լինել: Արեի ճառագայթները սպանում են մանրեներին:

Հաճախ յերեխաները և հասակավորներն ամառը հիվանդանում են արյունահոս լուծով—դիգենտիքայով: Դիգենտերիայի մանրեները կեղտոտ ջրի և կերակուրների միջոցով ընկնում են մարսողության որդանները, որինակ՝ մրգեղենի և բանջարեղենի միջոցով: Մարդն հիվանդանում ե, նրա մեջ սկսվում է հյուծող արյունահոս լուծ:

Դիգենտերիայից պաշտպանվելը դժվար չե: Զպետք և կեղտոտ ջուր խմել: Պետք ե խուսափել հում ջուր խմելուց: Զպետք ե չվացած պտուղներ և բանջարեղեն ուտել: Ուտելուց առաջ պետք ե ձեռները լվանալ: Պետք ե ուտել և խմել առանձին ամանից:

Կրոնապաշտ մարդիկ հաճախ վարակվում են և ուրիշներին ել վարակում են զանազան հիվանդություններով, վորոնք ստանում են կրոնական ծխալատարություններ կատարելիս: Յեկեղեցիներում հիվանդներն ու առողջները «հածուրում» են խաչն ու սրբերի պատկերները: «Հաղորդության» ժամանակ հիվանդներն ու առողջները մի ընդհանուր բաժակից, միևնույն գդալով ընդունում են հաղորդությունը և խմում են գինին: Զատկին հիվանդներն ու առողջները համբուրգում են: Ահա այդպիսի դեպքերում մարդիկ վարակվում են:

Պետք ե բացատրել, թե ինչ վտանգ են սպանում առողջությանը կրոնական ծեսերը: Կրոնական ծեսերը հա-

կատում են զիտության և առողջության պահանջներին, նրանք վարակիչ հիվանդությունների ոջախ են, ուետք են նրանց դեմ պայքարել:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱԾՈՂ ՄԻՋԱԾՆԵՐԸ

Վորոշ միջատներ մանրեների տարածողներ են և վարակում են մեզ զանազան վարակիչ հիվանդություններով: Յեվ հենց այդ միջատներն են, վորոնք հաճախ մրգեղենի և բանջարեղենի միջոցով: Դրանք են ճանճերը, վորոնակարանում կամ նրա շուրջը: Դրանք են ճանճերը, վորոնակները, մոծակները:

Ճանճերը (սկ. 72) թոշում են ամեն տեղ: Նրանք իրենց կնճիթի և թաթերի միջոցով հիվանդաբեր մանրեներ իրենց կնճիթի և թաթերի միջոցով հիվանդություններ, ինչպես են տարածում: Շատ վարակիչ հիվանդություններ, ճանճերի որինակ, դիգենտերիան, վորովայնային տիֆը, խոլերան տարածում են ճանճերի միջոցով:




Սկ. 72. Սենյակի ճանճը և նրա թըթը թուրը:

Հարկավոր ե պահպակը ճանճերի գեն: Տների մոտ չպետք ե գոմաղբ կամ աղտոտություն թափել, վորովինեան այդ տեղ են բազմանուած ճանճերը: Պետք ե սենյակի ճանճը վոչեցները կերակրական ծածկած պահելով: Կեմթերքները ճանճերից պաշտպանել՝ ծածկած պահելով: Կերակրի մնացորդները չպետք ե սեղանի վրա թողնել:



Մի վտանգավոր թշնամի ապրում ե անմաքրանուր մարդու մարմնի վրա: Դա վոզիլն ե (սկ. 73): Նա բժավոր տիֆ ե տարածում:

Վո՞յլը ծծում է հիվանդ մարդու արյունը, հետո տեղափոխվում է առողջ մարդու վսա և նրան կծում։ Այդ



Նկ. 74. Սովորական և մալլարիայի մոծակեր, Նախանց կալեկտի
յի ճանաչելի իրանց նստելու :

Ժամանակ առողջ մարդու արյան եջը ընկնում են մանրեներ, և նա հիվանդանում է քծավոր տիֆով:

Պետք եւ մաքրասեր լինելը Հաճախ ողուխը Եվանալ և
բաղնիք գնալը Հաճախ սպիտակեղենը փոխել:

Մարդու համար վտանգավոր ե նաև մալարիայի մո-
ծակը (նկ 74): Հիվանդին կծելուց հետո, թեր կծում ե
առողջ մարդուն, մոծակը նրան վարակում ե մալարիա
հիվանդությամբ:

Մալարիան առանձնապես տարածվում է ճահճող տեղերու, վորովիճետե մոծակները բազմանուած են կանգնած ջրերում: Մալարիայի մոծակների դեմ պայքարելու համար պետք է ճահճիճները չորացնել և նավթ ածել նրանց վրա, վորովեսպի նրանց մեջ գտնված մոծակների թթվուրները վոշնչանան: Մոծակների դեմ պետք է կուեկտ գ կերպով պայքարել:

Միջատների և նըանց նման կենդանի եւ^{նկ.} 5. Քոսի յակների ու եջ պատահում են այնպիսինեւը տիզը: Վորոնք իրենք են վարակիչ հիվանդություններ առաջացնում: Արգալիսիներից եւ, որինակ, մի ամենափոքր տիզ—քոսի տիզը (^{նկ. 75}):

Նա բնակվում է կաղվի տակ և առաջացնում է մաշ-
կի քսա հիվանդությունը: Բ ըլից պաշտպանվելը դժվար չէ:
Քսա ունեցող հիվանդին չպետք է շիվել:

ԱՄԱՐԴՎՈ. ՀԱՆԳ. ՍՏԵ

Շուտով զպրոցներում ուսումնական պարագմունքները վերջանում են և աշակերտներն ամառվա արձակություն ստանում: Ի՞նչ լավ և ամառը: Ամառվա ընթացքում պետք է հանդաստանալ և առողջությունն անբասինգել:

Վ. Հ մի բան այսպես չի ամրապնդում առողջությունը, ինչպես մաքուր և թարմ ողբը: Պետք է թարմ ողբուն շատ լինել կանաչներով ծածկված տեղում վորաեղ վաշ փոշի կա և վոչ մարդեներ:

Ամառը լավ ե գլուղատնտեսական աշխատաքայլ ։ Ամառի բանջարանոցում, ալգում և ծաղկանոցում։ Այդ բարակել բանջարանոցում, ալգում և ծաղկանոցում։ Բայց չպետք եցոթիւ աշխատանքը շատ առողջաբար ե, բայց չպետք ե ամենատոթ լեզանակին աշխատել, ավելի լավ ե աշխատել առավոտան և յերեկոյան դեմ, լերը այնքան տոթ չեն։ Ամառն ոպտակար ե լողանալ։ Զուրն ամբացնում է օպտակար ե լողանալ։ Որտեղուահանութեան ամառն ամբացնում է օպտակար ե լողանալ։ Որտեղուահանութեան ամառն ամբացնում է օպտակար ե լողանալ։

Ամառն սպատակար եւ լողաբարի. Որուառողջությունը Բայց պետք եւ կանոնավոր լողանաւը. Որուառողջությունը կամ կարելի յեւ յերկու անգամ լողանաւը. Ավելի լավ եւ առավատայան և յերեկոյան. Զրի սեջ պետք եւ մնալ 10 կամ 15 րոպեյից վոչ ավելի:

Մեր մարմնի վրա բարերար ազդոցու-
125

Քայլց արեից ել պետք ե զգուշությամբ ողտվել և ի չարը չգործադրել այն։ Յերկար արեի տակ պառկելը, ինչպես վոժանք անում են, վեառակար ու կարող եք մարմի այլ վածքներ ստանալ։ Մի քանի բոպե արեի տակ պառկելուց հետո պետք ե ստվերի մեջ մնալ և հետո լողանալ։ Միայն այսպիսի արեի վաննաներն ոգտակար են։

Ամառը նույնպես պետք ե որական կանոնավոր ու եժիս սահմանել։ Պետք ե առավոտյան ժամանակին վեր կենալ, կանոնավոր սնվել, ժամանակին պառկել քնելու։

Կանոնավոր ու ժիմն առողջության պահպանման և ամրացման անհրաժեշտ պայմանն ե։

ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳՈՒՄ
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ
Ս.ՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամբողջ տարվա ընթացքում, մանավանդ ամառը, հարցուր հազարավոր բանվորներ ԽԱՀՄ-ում գնում են հանգույք ազգարարակության ամբազնդելու, հանգսյան գըստանալու և առողջությունն ամբազնդելու, համար։ Հանգըստյան տներում և սանատորիաներում բուժվելու համար։ Հանգըստյան տներ ու սանատորիաները մեզ մոտ կազմակերպված են առհասարակ նախկին հարուստների տներում և կուրորտներում, վորոնցով առաջ դատարկապորտ, անբան բուրժուագիտում։ Մինչև հեղափոխությունը բարվորների համար վոչ հանգստյան տներ և վոչ ել սանատորիաներ կային, և չեյին կարող ի ինել, վորովհետեւ կամիտալիստները բանվորների առողջության մասին չեյին հոգում։ Բանվորների համար հանգստյան տներն ու սանատորիաները չուղարկած էին Սոցիալիստական Մեծ Հեղափոխության նվաճումներն են։

Հարցուր հազարավոր լերեխաներ՝ դպրոցականներ և պիոներներ ամառը գնում են պիոներական

համբարները յեզ գլուղերը հանգստանալու և առողջությունը ամրապնդելու, կոլվարի ղեկավարությամբ և բժըշկությունը պիոներական ճամբարում կազմակերպելի հակողությամբ պիոներական ճամբարում կազմակերպելու ուժիմ հանգիստ, սպորտ, ուսուցում, սնունդ, քուն։

Քաղաքում մնացած յերեխաների համար կազմակերպվում են մանկական երազարակենք, վորտեղ կազմակերպվում են խաղեր, սպորտ, ուսուցման պարագմունքներ, աշխատանք։

Հանգստացած և ամրապնդված յերեխաներն աշնանը վերադառնում են դպրոց սովորելու։ Կապիտալիստները յերեք չեն հոգում աշխատավորների յերեխաների առողջության մասին։

Միայն խորհրդային իշխանությունն ե հոգում աշխատավորների և նրանց լերեխաների առողջության մասին, վորովհետեւ խորհրդային իշխանությունն աշխատավորների իշխանությունն ե։

Հավելված

Ի՞շ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՔԵԼ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՄԱՐ

I. «ՀՈՂ ՅԵՎ ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒԵՐ» ՀԱՏՎԱԾԻ
ՀԱՄԱԶԱՅՆ

1. Հավաքել հողերի նմուշներ: Դրա համար պետք է խորը փոս փորել դաշտում կամ բանջարանոցում, կամ անտառում: Հողի նմուշները վերցը քանազան խորությունից և փաթաթեցնեք լրագրի թղթի մեջ: Հետո հողը չորացրեք ողում: Չորացրած հողը դրեք լուցկու դատարկ տուփի՝ մեջ կամ հատուկ ստվարաթղթից պատրաստած արկղիկների մեջ (լավ ե, վոր նրանք ապակե ծածկոց ունենան): Արկղիկների վրա թղթե ետիկետներ կպցնել և վրան դրել, վորտեղից ե վերցրած այդ հողը:

2. Հավաքել կավի յեվ ավազի նմուշներ: Հավաքեցէք ձեր տեղում պատահած զանազան տեսակի կավերի (կարմիր կար, սպիտակ և այլն) նմուշներ: Հետաքրքրական են հավաքել այնպիսի կավերի նմուշներ, վորոնք գործածվում են զանազան իրեր պատրաստելու համար (աղցու սի կավ, բրուտի կավ, ճենապակու կավ): Պետք են հավաքել նաև զանազան տեսակի ավազներ (մանրահատիկ, խոշորահատիկ ավազ): Կավի և ավազի նմուշներն ողում չորացնելուց հետո զնել արկղիկների մեջ: Արկղիկների վրա փակցնել ետիկետներ մակագրություններով:

3. Հավաքի գրանիտի նմուշներ: Գրանիտի կտորներ
կարող են հանդիպել դաշտերում, խճուղու յեզրերին: Գրա-
նիտը հեշտ է ճանաչվում, յերբ դիտում եք նրա թարմ
բեկորը: Գրանիտը պետք է մուրճով կոտրեք գրանիտի
կտորը: Շատ հաճախ պատահում են մոխրագույն և կար-
միք գրանիտներ: Հետաքրքրական են հավաքել քայլքայվող
գրանիտի նմուշներ: Գրանիտի զանազան նմուշների հա-
վաքածուներ պատրաստել:

վաքածուներ պատրաստել:

4. Հավաբել կափից յեզ ափազից պատրաստ զա-
նազան իրերի նմուշներ, որինակ, զանազան աղյուսներ,
բրուտի զանազան մանր իրեր, ապակյա և ձենապակյա-
կրերի նմուշներ կամ կտորանքներ: Կազմեցեք հավաքա-
ծու՝ «ի՞նչ են պատրաստում կափից և ափազից» թեմայի
համար:

5. Հավաբեկ կրաքարերի նմուշները. Յանդուռ յ
վաքել զանազան կրաքարեր՝ տարրեր կարծրության (պինդ,
փխրուն) և զանազան գույնի (մոխրագույն, սպիտակ),
վարդագույն և այլն): Հետաքրքրական ե գտնել խեցիա-
վարդագույն կրաքար: Այդպիսի կրաքարը կազմված է, մինչև ան-
փոր կրաքար: Այդպիսի կրաքարը կազմված է, մինչև ան-
գամ սովորական աչքով նկատելի, խեցիներից: Գտնել մար-
մարի նմուշներ, կազմել կրաքարերի հավաքածու:

6. Հավաքել կրի յեզ ցեսար առաջ
հանգած կիր և ցեմենտ կարելի յէ ձեռք բերել կա-
ցվող շնչքերի մոտից: Պետք է նկատի ունենալ, վոր
ըն ուտիչ նյութ ե: Նրա հետ պետք է զգույշ փարփել:
Առը պետք է պահել պինդ փակած ապակե բանկաների
ում փորձանոթների մեջ: Այդ հավաքածուի հետ լավ կլինի
առաջնել մերգելը: Մերգելը կավից և կրաքարից կազմը-
ած ապար ե: Ցեմենտի գործարաններում մերգելը գործ
ածում ցեմենտ պատրաստելու համար:

7. Հավաբել հանեային պարագանյութերի նմուշներ՝ կալիումի աղ, սելիտրա, սուզերֆուֆատ, և այլն։ Այդ աղերը կարելի յե ձեռք բերել կոլանտեսությունից և խորհարնակնությունից։ Այդ նյութերը լցրեք փորձանոթների մեջ համապատասխան ետիկեաներով։ Այդ հավաքածուին լավ կլինի միացնեք ապատիտների և ֆոսֆորիտների նմուշներ, վորից գործարաններում պատրաստում են սուպերֆուֆատ։

8. Հավաբել հանածո վառելիի նմուշներ՝ տորֆ (չոր), գորշ ածուխ, քարածուխ, անտրացիտ, նավթ։ Կազմեցնեք նավթից ստացած արտադրանքների հավաքածութենողին, մեքենայի յուղ, վագելին, պարագին։ Այդ արտադրանքները պետք ե պահել փոքրիկ, լավ փակված սրվակներում։

9. Հավաբել յերկարաբարի նմուշներ՝ գորշ, կարմիր և մագնիտի յերկաթաքարեր, գրանցից հավաքածու կազմել։

10. Հավաբել թուղի, յերկարի յեվ պողպատի նմուշներ և նրանցից հավաքածու կազմել։ Կազմեցնեք թուղեւ, պողպատյա և յերկաթե մանր իրերի հավաքածու։

II. «ԲՈՒՑՍԵՐԻ ԿՅԱՆՔԸ» ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՉԱՆ

1. Դեռ մինչեւ գարնան սկսելը հավաբել տեղական թիերի յեվ ծառերի նյուղեր։ Այդ ճյուղերը դրեք ըրով լիքանիաների մեջ, դպրոցի «կենդան անկյունում»։ Յերկույթերէ որը մեկ անգամ ջուրը փոխեցնեք։ Դիտեցնեք, թե ինչպես են բողբոջներն ուռչում և ինչպես բողբոջներից գարգանում են տերեներով և ծաղիկներով պատած ճյուղեր։

2. Վաղ գարունքին հավաբել վաղ ծաղկող թիերի յեվ ծառերի նյուղեր։ Նրանցից ներբարիումներ կազմել, դրա համար կտրել լուսարի թղթից թերթիկներ և ինամ-

քով նրանց արանքում դնել ծաղիկներով պատած ճյուղը։ Թղթի թերթիկները բույսերի հետ միասին դնել յերկու հարթ տախտակների արանքում և վորեե ծանրությամբ ճնշել, որինակ՝ քարերով։ Վարող ժամանակից հետո թուղթը կթացանա, վորովհետեւ նա իր մեջ կծծի գոլորշիացող ջուրը։ Այդ պատճառով խոնավացած թուղթը պետք ե որը մեջ փոխել չոր թղթով և չօրացնել։

Յերբ բույսը կչորանա, թղթի կտորներով ամրացրեք մի այլ թղթի վրա։ Բույսի տակը կպցնել ետիկետ և նրա վրա գրել՝ 1. բույսի անունը, 2. վորտեղ ե գտնված, 3. յերբ վառ գտնված, 4. ով ե դաել։ Այդ կլինի վաղ ծաղկող տեղական թփերի և ծառերի հերքարիումը։

3. Հավաբել վաղ ծաղկող խոտարույսեր՝ խոճկորիկ, փնջիկ, սաղի սոխ և այլն։ Ուշագրություն գարճնել նրանց փնջիկ սաղի սոխ և այլն։ Ուշագրություն մասերի վրա, վորտեղ կուտակված են սնընսուորերկրյա մասերի վրա, վորտեղ կուտակված են սնընսուորերի պաշարները։ Գետնից հանած բույսերն զգուգանցությամբ տնկել կավե ծաղկամանների կամ թիթեղյա բանական մեջ։ Բույսերը տնկել այն հետ միասին, վորի կաների մեջ։ Բույսերը տնկել այն հողի հետ միասին, վորի մեջ նրանք բուսել եյին։ «Կենդան անկյունում» դիտել այդ բույսերի զարգացումը։

4. Հավաբել դաշտային յեվ բանցարանցային այն բույսերի սերմերը, վորոնք մշակվում են ձեր տեղում։ Սերմերը դրեք փորձանոթների կամ օրվակների մեջ, նրանց վրա կպցըք թղթեր համապատասխան մակագրություններով։ Պետք ե սովորել զանազան մշակովի բույսերի սերմերը ճանաչել արտաքին տեսքից։

5. Հերբարիում պատրաստել արմատներ ունեցող բույսերից։ Մշակովի բույսերից կարելի յե վերցնել՝ ցորենը, տարեկանը, սիսեռը, իսկ վայրի բույսերից՝ խատուտիկը, յեզան լեզուն։

6. Հավաքել բույսերի տարբեր ցողուններ: Ծառաբնի կտրվածք (կարելի յե կլոր փայտից սղոցել), թփերի ճյուղերի կտրվածքներ, զանազան խոտաբույսերի ցողուններ: Վերջիններս պետք են նախապես չորացնել թղթի թերթերի արանքում: Կազմել հավաքածու՝ «բույսերի ցողունները» թեմայով:

7. Հավաքել յեզ չորացնել բույսերի բազմազան տերեւններ: Չորացրած տերեխներից հերբարիում պատրաստել:

8. Հավաքել յեզ չորացնել ավելի ուժ ծաղկող բույսերի ծաղկապատ նյուղեր (խոտաբույսերից, թփերից և ծառերից) կազմել հերբարիում:

9. Արկղների կամ ծաղկամանների մեջ Տնիկել կարտոֆիլի պալարներ, սովորական սոխի կոճղեղներ, գազարի արմատներ, ճակնդեղ, կաղամթի կոթեր: Բույսերի այդ մասերում կուտակված են սննդանյութերի պաշարներ: Դիտե, այդ բույսերի գարգացումը: Չմռանալ ջրել:

10. Գուցրում կազմել սննյակում անող բույսերի անկյուն: Մշակման համար կարելի յե հանձնաբարել մեր սովորական սենյակի բույսերը՝ տրաղեսկանցիա, փանչուկ, բեզոնիա և ալին: Այդ բույսերը կարելի յե ձեռք բերել տեղի ծաղկաբուծարանից: Ամառվա արձակուրդներին այդ բույսերը տալ այն աշակերտներին, վորոնք սիրում են սենյակի բույսեր, վորպեսզի նրանք պահեն այդ բույսերն ամառվա ընթացքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. ՀՈՂ ՅԵՎ ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՒԵՐ

Հողը	5
ինչից և կազմված հողը	6
Փտահող	8
Կալ	9
Ավագ	11
Գրանիս	13
ինչպիս և քարայրում գրանիտը	15
ինչպիս են առաջանում կավային թերթաքարն ու ավաղաքարը	18
Կափի, ավագի յեւ գրանիտի ոգտագործումը մարդկանական սննեալթյան մեջ	19
ինչպից աղյուս պատրաստում	19
ինչպիս են կավից ամանեղեն պատրաստում	20
ինչպիս են կավից ամանեղեն պատրաստում	21
ինչպիս են առաջանում կավային թերթաքարն ու ինչի համար և զործածվում գրանիտը	22
Կրաքարեր	23
Կիր	25
Ցհմենատ և բիտոն	26
Աղ	27
Քարագ	28
Նստվածքային աղ	30
Աղի աղբյուրներ	30
Ծովի ջրից աղ ստանալը	32
Պարաբատացնող աղեր	32
Գետնի տակից հանվող վառելիքներ	34
ինչպիս և առաջանում տորֆը	35

Ինչպես են հաճում և ոգտագործում տորֆը	37
Ինչպես և առաջացել քարածուխը	39
Ինչպես են հաճում քարածուխը	41
Ինչպես են հաճում նավթը	45
Վառելիքը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ	47
Մետաղներ	48
Յերկաթի հանքաքարեր	50
Ինչպես են հաճում յերկաթաքարը	51
Ինչպես են սոսանում թուջ, պողպատ և յերկաթ	51
Պղինձ	54
Ալյումին	54
Կապար	55
Վուկի	56
Մետաղները ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ	57

II. ԶԹԻՔ

Զրի յերեք վիճակը	59
Բնական ջուրը մաքուր երարդյոք	61
Ինչպես են ջուրը մաքուր պղասորությունից	61
Ինչպես են մաքուր ջուրը նրա մեջ լուծված աղերից	63
Անձրև և ձյուն	64
Ցող և յեղյամ	65
Զրի զրջանառությունը բնության մեջ	66
Զրի ընդարձակվելը ջերմությունից և սեղմվելը՝ ցրտությունից	67
Զրի ընդարձակվելը սառչելիս	68
Զերմաշափ	68
Զրի աշխատանքը բնության մեջ	70
Զրի ուժի ոգտագործումը տնտեսության մեջ	71
Զրային շարժիչներ	71
Մեր զրային ելեկտրակայանները	73
Շողեշարժիչներ	74

III. ՈՒ

Ողը տեղ և բռնում	76
Ողը ծանրություն ունի	77
Ողը սեղմվող և առածգական	77

Տաքությունից ողի ընդարձակվելը և ցրտությունից սեղմվելը	79
Ողը ջերմությունը վատ և հաղորդում	80
Վար ողն և ավելի թեթև — տաքը, թե սառը	82
Առաջին ոգաչուները	83
Ողապարիկ	85
Ողանավ	86
Թամի	87
Թամու աշխատանքը տնտեսության մեջ	88
Ինչից երադկացած ողը	91
Թթվածին	91
Ածխաթթու գաղ	93
Ողի բաղադրությունը պարզաբանող փորձ	95

IV. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Ինչ են կայծակն ու վարուս	96
Շանթարդել	98
Ելեկտրականությունը ժողովրդական տնտեսության մեջ	99

V. ԲՈՒՑՍԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Ինչպես են ապրում բույսերը վաղ գարունքին	100
Բողբոջներ	100
Տերեվապատում	101
Ծաղկելը	101
Առաջին գարնանային ծաղիկները	102
Ինչպես են բույսը զարգանում սերմից	103
Բույսերի արմատները	105
Բույսերի կանոչ տերեվները	107
Ինչպիսի ցողուններ ունեն տարրեր բույսերը	109
Զրի գոլորեփացումը բույսերի կողմից	111
Ծաղիկների, միջաների և բամու մասին	111
Ծաղկած բալենիների այգում	113
Ծաղկած տարրեկանի արտում	114
Մշակովի բույսերի զարգացումը	114

VI. Ա.Ի.ՌԴԱ.ՊԱ.ՀՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքն ու հանգիստը դպրոցում	117
Տան աշխատանքն ու հանգիստը	119
Բանվորների աշխատանքն ու հանգիստը արտադրության մեջ	120
Մանրեները վարակիչ հիվանդություններ առաջացնող են	122
Վարակիչ հիվանդություններ տարածող միջատները	125
առվա հանգիստը	127
Ինչպես և խորհրդային իշխանությունը հոգում աշխատավորների և նրանց յերեխաների առողջության մասին	128
Հավելված	130
Ինչ պետք և հավաքել դպրոցի աշխատանքի համար	130

Պատ. Խմբագիր՝ Խ. Գրիգորյան
 Լեզվական խմբագիր՝ Հար. Պետրոսյան
 Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
 Սրբագրիչ՝ Մ. Մարտիրոսյան

Գլավլիտի լիազոր՝ Ղ - 3668. Հրատ. 4637.

Պատվեր 472. Տիլամ 40.000—.

Թուղթ 62×94.

Տպագր. 9³/₄ Մամ.

Մի մամուլում 24 480 նշան.

Հանձնված և արտադրության 15 մայիսի 1938 թ.

Ստորագրված և տպագրության 15 հունիսի 1938 թ.

Գետիքատի 1 տպարան, Յեղեկան, Լենինի 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0977630

11 СЕН 1938
ԳԻՒԾ 80 4.
ԿԱԶՄԸ 50 4.

453

11

28533

В. А. ТЕТЮРЕВ
Естествознание
I часть
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.